

**«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ**

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՆԳԼԵՐԵՆԻՑ



ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ
ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ**

Երևանի պետական բժշկական համալսարանի (ԵՊԲՀ) փորձնական ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է Համաշխարհային բանկի դրամաշնորհային ծրագրի և ՀՀ Կրթության և գիտության նախարարության Կրթական ծրագրերի կենտրոնի աջակցությամբ: Հավատարմագրման գործընթացի իրականացմանը նպաստել են «Հայաստանում որակի ապահովման տեխնիկական աջակցություն» ծրագիրը (ARQATA), որը համակարգվում էր Նիդեռլանդների և Ֆլանդրիայի հավատարմագրման կազմակերպության (NVAO) կողմից և «Փորձնական հավատարմագրումներ» ծրագիրը (Pilot Accreditations), որը համակարգվում էր «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (ՈԱԱԿ) կողմից:

Փորձարկումը համատեղ գործընթաց է եղել, այդ իսկ պատճառով փորձագիտական խումբը բաղկացած էր տեղացի և Նիդեռլանդներից ու Ֆլանդրիայից (Բելգիա) ժամանած փորձագետներից:

Փորձնական հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Հետևաբար, եվրոպական և հայաստանյան փորձագետների առջև դրված էր երկու խնդիր՝

- փորձնական հավատարմագրման գործընթաց,
- գործընկերային գնահատում միջազգային չափանիշների հիման վրա:

Փորձարկմանը մասնակցել են հետևյալ համալսարաններն ու ծրագրերը՝

1. Երևանի պետական բժշկական համալսարան (ԵՊԲՀ) - ինստիտուցիոնալ փորձաքննություն,
2. «Բուժական գործ» բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրեր, ԵՊԲՀ, ծրագրային գնահատում,
3. Երևանի պետական համալսարան (ԵՊՀ), ինստիտուցիոնալ փորձաքննություն,
4. «Կենսաբանություն» բակալավրի և «Գենետիկա» մագիստրոսի կրթական ծրագրեր, ԵՊՀ, ծրագրային գնահատում:

Չորս փորձագիտական խումբերի առջև դրված էր երկու խնդիր՝ (1) ինստիտուցիոնալ մակարդակում իրականացնել փորձնական փորձաքննություն, ծրագրային մակարդակում՝ փորձնական գնահատում՝ ՈԱԱԿ-ի չափանիշներին համապատասխան, (2) իրականացնել փորձագիտական գնահատում՝ միջազգային չափանիշներին համապատասխանելու և Եվրոպական բարձրագույն կրթության տարածք (ԵԲԿՏ) ինտեգրվելու բուհերի հավակնությունների տեսանկյունից:

ARQATA ծրագրի շրջանակներում իրակացված փորձարկումները միտված են աջակցելու հայաստանյան շահակիցներին ձևավորել որակի ապահովման արդյունավետ համակարգ: Փորձարկումների ընթացակարգը, հիմնականում, նման է պաշտոնական հավատարմագրման գործընթացի ընթացակարգերին, սակայն եղել են որոշակի տարբերություններ: Հենց սկզբից գործընթացը պլանավորվել և իրականացվել է որպես փորձարկում՝ պաշտոնական գործընթացի որոշակի տարբերով: Փորձագիտական այցի տևողությունը ավելի կարճ էր (երկուսից երեք օր): Այցի ընթացքում փորձագետները հանդես եկան որպես «քննադատ գործընկերներ»: Փորձնական հավատարմագրման գործընթացի վերջում փորձագիտական խմբերը կներկայացնեն զեկույցներ: Չնայած, զեկույցները չեն կարող լիարժեք հիմք հանդիսանալ պաշտոնական հավատարմագրման վերաբերյալ որոշման կայացման գործընթացում:

Այս զեկույցն անդրադառնում է ԵՊԲՀ-ի փորձնական ինստիտուցիոնալ հավատարմագրմանը՝ ըստ ՈԱԱԿ-ի չափանիշերի ու չափորոշիչների, և գործընկերային գնահատմանը՝ ըստ միջազգային չափանիշների: ՈԱԱԿ-ի հավատարմագրման չափանիշներն ու ընթացակարգերը հաստատվել են ՀՀ կառավարության կողմից 2011թ. հունիսի 30-ին: Փորձնական փորձաքննությունն իրականացվել է Որակի ապահովման եվրոպական չափորոշիչներին և ուղենիշերին համապատասխան, ինչպես նաև բժշկության ոլորտում փորձագիտական խմբի փորձառության հիման վրա:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|--|----|
| ՆԱԽԱԲԱՆ..... | 2 |
| I. ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ..... | 5 |
| II. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ..... | 8 |
| III. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ..... | 9 |
| IV. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ..... | 12 |
| V. ՓՈՐՁՆԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄ..... | 13 |
| ՉԱՓԱՆԻՇ I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ..... | 13 |
| ՉԱՓԱՆԻՇ II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ..... | 15 |
| ՉԱՓԱՆԻՇ III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ..... | 19 |
| ՉԱՓԱՆԻՇ IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ..... | 22 |
| ՉԱՓԱՆԻՇ V. ՊՐՈՑԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ..... | 26 |
| ՉԱՓԱՆԻՇ VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ..... | 29 |
| ՉԱՓԱՆԻՇ VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ..... | 32 |
| ՉԱՓԱՆԻՇ VIII. ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ..... | 35 |
| ՉԱՓԱՆԻՇ IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻԶԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ..... | 37 |
| ՉԱՓԱՆԻՇ X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ..... | 39 |
| ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏՈՒՄ..... | 42 |
| VI. ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ..... | 43 |
| ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐԸ..... | 46 |
| ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ..... | 49 |
| ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԸ..... | 51 |
| ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ..... | 53 |
| ՀԱՎԵԼՎԱԾ 5. ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ..... | 54 |
| ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ..... | 55 |

I. ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ

Փորձագիտական խումբը դրական է համարում Երևանի պետական բժշկական համալսարանի (ԵՊԲՀ) մասնակցությունը արտաքին գնահատման անկախ գործընթացին: Համալսարանը միանշանակ իր ներդրումն ունի որակի ներքին ապահովման գործընթացում՝ ստեղծելով որակի ապահովման հանձնաժողով և աջակցելով նրա գործունեությանը, ինչպես նաև սերտ համագործակցելով ՈԱԱԿ-ի¹ և NVAO-ի² հետ ARQATA³ ծրագրի շրջանակներում: Արդյունքում որակի այս հանձնաժողովը լավ աշխատանք է կատարել՝ համալսարանի համար հնարավոր դարձնելով արտաքին գնահատման գործընթացի իրականացումը:

Փորձնական ինստիտուցիոնալ հավատարմագրում

Ներկայացված հիմքերի մանրամասն ուսումնասիրությունից և համալսարանի ներկայացուցիչների հետ հարցազրույցներ ունենալուց հետո փորձագիտական խումբը եզրակացնում է, որ ԵՊԲՀ-ը բավարարում է հավատարմագրման տասը չափանիշներից մեծամասնության պահանջներին՝ բացառությամբ երկուսի: Հետազոտությանն ու միջազգայնացմանը վերաբերող չափանիշների պահանջները դեռևս բավարար չեն:

Ուժեղ կողմեր

- 1 ԵՊԲՀ-ը լավ կառուցվածք ունեցող **հաստատություն** է՝ հստակ սահմանված **առաքելությամբ** և շատ մոտիվացված ու նվիրված պրոֆեսորադասախոսական կազմով: Փորձագիտական խումբը նկատել է, որ աշխատակազմը համախմբված է աշխատում, իսկ քննարկումները կրում են համագործակցային բնույթ:
- 2 Նվիրված **պրոֆեսորադասախոսական կազմ**, որն ընդգրկված է կրթական ծրագրի մշակման և ուսանողների ուղղորդման գործընթացներում:
- 3 Հատկապես **ուսանողների ներգրավվածությունը** բոլոր մակարդակներում կարևոր է, որը պետք է պահպանել: Ուսանողների ձայնը լսելի է և ազդեցիկ որոշումների կայացման գործընթացում:
- 4 **Ծրագրերն** ունեն բավականին մանրամասն և լավ կառուցված ուսումնական պլաններ, որոնք հիմնված են դասընթացների վրա: Բոլոր ծրագրերի համար ուսումնառության ակնկալվող արդյունքները սահմանված են:
- 5 **Դասավանդման և ուսուցման մեթոդները** ավանդական բնույթ ունեն, հետևապես համապատասխանում են ավանդական կարգին և դասախոսակենտրոն ուսումնական ծրագրին:
- 6 Ուսանողների **գնահատումը** նույնպես բավականին ավանդական է և որպես այդպիսին՝ համահունչ ուսումնական ծրագրին:
- 7 Համալսարանը սահմանափակ բյուջեով կարողացել է ստեղծել **ուսումնական միջավայր**, որը ներառում է գրադարան և SS հարմարություններ: Ներկա իրավիճակում դրանք բավարար են:

¹ «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամ

² Նիդեռլանդների և Ֆլանդրիայի հավատարմագրման կազմակերպություն

³ Հայաստանում որակի ապահովման տեխնիկական աջակցության ծրագիր

Թույլ կողմեր

- 1 **Հետազոտական աշխատանքները** սահմանափակ են և՛ արդյունքի, և՛ աշխատակազմի ու ուսանողների՝ հետազոտության մեջ ներգրավվածության աստիճանի տեսանկյունից: **Բյուջեի 5%-ից քիչ է տրամադրվում** հետազոտությանը:
- 2 Համալսարանում բացակայում է հստակ **կրթական հայեցակարգ**:
- 3 Ուսումնառության ակնկալվող արդյունքների և **գնահատման** միջև կապը հստակ չէ: Հատկապես պետք է ուշադրություն դարձնել կլինիկաներում ձեռքբերվող հմտությունների գնահատմանը:
- 4 Սահմանափակ թվով ուսանողներ են միայն մասնակցում միջազգային գործընթացներին: Օրինակ, բոլոր ուսանողները պետք է մեկնեն արտասահման առնվազն 3-ից 6 ամսով: Նույն դիտարկումը վերաբերում է աշխատակազմին: Ոչ ամբողջ աշխատակազմն է ներգրավված **միջազգայնացման** գործընթացում: Այս առումով կլինիկայի աշխատողները, ի տարբերություն դասավանդողների, առավելություն ունեն: Այսպիսով, և՛ աշխատակազմի, և՛ ուսանողների միջազգային շարժունությունն անհրաժեշտ է ապահովել:
- 5 Փորձագիտական խումբը միջազգային **բենչմարքինգի** հիմքեր չի նկատել: Որոշ ամբիոններ ներգրավված են բենչմարքինգի գործընթացում, բայց այն ինստիտուցիոնալ մակարդակով չի իրականացվում:
- 6 Աշխատակազմի և ուսանողների համար **SS համակարգը** սահմանափակ է:
- 7 **Արտաքին շահակիցների** ազդեցությունը սահմանափակ է:
- 8 Համալսարանը հիմնականում **կենտրոնանում է** բժշկական ծրագրերի վրա, մինչդեռ առաջարկում է հավասարապես կարևոր այլ ծրագրեր:

Խորհրդատվություններ

- 1 Ընդհանուր առմամբ անհրաժեշտ է, որ համալսարանն **ավելի բաց լինի աշխարհին**. ավելի շատ միջազգային բենչմարքինգի իրականացման, արտաքին շահակիցների ազդեցության և համալսարանից դուրս դասախոսների և ուսանողների միջազգային շարժունության ապահովման անհրաժեշտություն կա:
- 2 Փորձագիտական խումբը խորհուրդ է տալիս ամրապնդել կապը **հետազոտության** և կրթության միջև:
- 3 Համալսարանը պետք է նաև հաշվի առնի ֆինանսական միջոցները և վերանայի հետազոտության ու կրթության համար **բյուջեի** բաշխման խնդիրը: Անհրաժեշտ է խուսափել ռեսուրսների հատվածական բաշխումից և նպատակաուղղվել դեպի ֆակուլտետների և ծրագրերի ինտեգրացումը: Համալսարանի ֆինանսական հնարավորությունները կարելի է ընդլայնել նաև հետազոտական աշխատանքներում ներդրում կատարելու միջոցով:
- 4 Անհրաժեշտ է, որպեսզի համալսարանն ապահովի **կառավարման** բավարար **տվյալների** համակարգը, և նախընտրելի է, որ դա կատարվի թվայնացված համակարգով:

Գործընկերային գնահատում միջազգային չափանիշներին համապատասխան

Որպես քննադատ գործընկերներ՝ փորձագետներն իրականացրեցին նաև միջազգային չափանիշների հիման վրա գործընկերային գնահատում, որի արդյունքում կատարվեցին մի

շարք դիտարկումներ և տրվեցին խորհրդատվություններ ԵՊԲՀ-ի՝ ԵԲԿՏ ինտեգրվելու ձգտման ուղղությամբ:

Դիտարկումներ

- 1 Համալսարանը միանշանակ գտնվում է **անցումային** փուլում: Փորձագիտական խումբը նկատել է անհամապատասխանություն համալսարանի ռազմավարության և ներկայիս գործունեության միջև:
- 2 **Ծրագրերն** ավանդական բնույթ են կրում այն առումով, որ դրանք հիմնված են առանձնացված դասընթացների վրա և դասախոսակենտրոն են: Բացի դա, շեշտադրված է ավելի շատ տեսական գիտելիքը, քան կլինիկական հմտությունները և մասնագիտական վարքը: Ծրագրերն արդիականացնելու նպատակով՝ անհրաժեշտ է ակնկալել ավելի բազմադիսցիպլինար և ուսանողակենտրոն մոտեցում:
- 3 **Տվյալների հավաքագրման** մեխանիզմը առկա է, բայց դեռ ամբողջովին մշակված և ինտեգրված չէ:
- 4 Ծրագրերի որակի մասին տեղեկատվության տրամադրման ներքին **կառուցվածքը** որպես այդպիսին շատ խրթին է:

Խորհրդատվություններ

Փորձագիտական խմբի խորհրդատվությունները վերաբերում են այն խնդիրներին, որոնք առնչվում են Բոլոնիայի գործընթացի շրջանակներում փոփոխություններ կատարելու համալսարանի ձգտմանը: Այդ խնդիրներից են՝ փոփոխությունների կառավարման, մասնագիտական կրթական բաժին, կրթական հայեցակարգի արդիականացում, ավելի շատ ջանքերի գործադրում հետազոտական աշխատանքների իրականացման համար և հետազայում ներդրումների կատարում միջազգայնացման ուղղությամբ:

Փորձագիտական խմբի ղեկավարը և համակարգողը հայտարարում են, որ այս զեկույցն արտացոլում է փորձագիտական խմբի կարծիքն ու դատողությունները: Փորձագիտական խումբը վերլուծել է զեկույցը և համաձայն է զեկույցում ներկայացված եզրակացությունների հետ: Խմբի անդամները հաստատում են, որ գնահատումն իրականացվել է անկախության սկզբունքի պահանջներին համապատասխան:

10.10.2013

Պրոֆեսոր Բեն Վան Քեմփ _____
ղեկավար

Աննա Կարապետյան _____
համակարգող

II. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

ԵՊԲՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի անդամների կողմից.

1. Դոկտոր պրոֆեսոր **Բեն Վան Քենի**, PhD, հեմատոլոգիայի պրոֆեսոր, Բրյուսելի ազատ համալսարանի (Vrije Universiteit Brussel) նախկին ռեկտոր, Բժշկական դպրոցի նախկին դեկան, Համալսարանական հիվանդանոցի (UZ Brussels) կառավարման խորհրդի նախագահ (փորձագիտական խմբի ղեկավար)
2. Դոկտոր պրոֆեսոր **Հարի Հիլեն**, PhD, Ներքին բժշկության պրոֆեսոր և պատվավոր դեկան, Առողջապահության ֆակուլտետ, բժշկություն և բնագիտություն, Մասստրիքթի համալսարան, Նիդեռլանդներ
3. Դոկտոր պրոֆեսոր **Սամվել Պիպոյան**, PhD, Երևանի պետական մանկավարժական համալսարանի կենսաբանության ամբիոնի պրոֆեսոր, ՀԿ համահիմնադիր և խորհրդի անդամ, Բարեփոխումներ բարձրագույն կրթության ոլորտում, Ցկյանս ուսումնառության հայաստանյան լիգա
4. Դոկտոր պրոֆեսոր **Լևոն Եպիսկոպոսյան**, կենսաբանության դոկտոր (PhD), մարդաբանություն, Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի էթնոգենոմիկայի լաբորատորիայի վարիչ, Գիտությունների ազգային ակադեմիա, Մարդաբանության եվրոպական ասոցիացիայի (EAA) անդամ, Մոլեկուլային և բջջային կենսաբանության հայաստանյան միություն
5. **Աննա Մարգարյան**, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի շրջանավարտ, Կրթության կառավարման բաժին: Բակալավրի աստիճանը ստացել է Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանում:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է համալսարանի հետ և նշանակվել ՈԱԱԿ-ի տնօրենի որոշմամբ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել են կրտսեր համակարգող Աննա Կարապետյանը ՈԱԱԿ-ի ավագ համակարգող Անուշավան Մակարյանի վերահսկմամբ (Հայաստանից), ինչպես նաև Հոլանդիայի և Ֆլանդրայի հավատարմագրման կազմակերպության ներկայացուցիչներ ու ավագ խորհրդատուներ Միշել Վերան և Ֆրանկ Վեյմլինկը:

Արձանագրությունները կազմել է Արփինե Մկրտչյանը:

Թարգմանությունը կատարել է Անուշ Մկրտչյանը:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները և քարտուղարությունը ստորագրել են գաղտնիության և անկախության համաձայնագրեր:

III. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՍԲԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

ԵՊԲՀ-ը դիմել է փորձնական ինստիտուցիոնալ հավատարմագրման համար 2012թ. մարտի 1-ին՝ ՈԱԱԿ-ին ներկայացնելով դիմումը, արտոնագրի պատճենները և համապատասխան հավելվածները:

ՈԱԱԿ-ի քարտուղարությունը ստուգել է դիմումի փաթեթի համապատասխանությունը ՈԱԱԿ-ի պահանջներին՝ լրացված դիմումում նշված տվյալները, հավելվածները և համալսարանի կողմից լրացված ՈԱԱԿ էլեկտրոնային հարցաշարը:

Համաձայն 2012թ. մարտի 26-ին դիմումն ընդունելու մասին որոշման՝ ստորագրվել է եռակողմ համաձայնագիր ՈԱԱԿ-ի, Կրթական ծրագրերի կենտրոնի (ՀՀ ԿԳՆ ԾԻԳ) և ԵՊԲՀ-ի միջև:

Կազմվել և հաստատվել է գործողությունների ժամանակացույցը:

ԵՊԲՀ-ի ղեկավարության որոշման հիման վրա ձևավորված ինքնավերլուծություն իրականացնող թիմը կատարել է ինքնագնահատում 2012թ. դեկտեմբերի 31-ից մինչև 2013թ. ապրիլի 1-ն ընկած ժամանակահատվածում:

Ինքնավերլուծության զեկույցի անգլերեն և հայերեն տարբերակներն ընդունվել են ՈԱԱԿ-ի կողմից 2013թ. ապրիլի 2-ին:

ՈԱԱԿ-ի կրտսեր համակարգողն ուսումնասիրել է զեկույցը՝ տեխնիկական առումով ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով: 2013թ. ապրիլի 8-ին ինքնավերլուծության զեկույցն ուղարկվել է փորձագիտական խմբին՝ նախնական գնահատման: Գնահատումն իրականացվել է 2013թ. ապրիլի 8-ից մինչև 2013թ. հունիսի 7-ն ընկած ժամանակահատվածում: Գնահատման արդյունքում դուրս են բերվել այցի ժամանակ պարզաբանման ենթակա հարցերը և որոշվել են հանդիպումների թիրախային խմբերը:

Իրականացված ընթացակարգ

2012թ. հոկտեմբերի 10-ին ԵՊԲՀ-ի փորձնական ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացում ներգրավված անձինք մասնակցել են որակի ներքին ապահովման վերաբերյալ երկօրյա վերապատրաստմանը: Վերապատրաստման ընթացքում պարզաբանվել են մի շարք հարցեր՝ որակի ապահովման շրջանակը, ինքնավերլուծության զեկույց գրելու գործընթացը, փորձաքննության կազմակերպումը և որակի արտաքին գնահատումը:

2012թ. դեկտեմբերի 19-ին, ԵՊԲՀ-ի ներկայացուցիչները և փորձնական ինստիտուցիոնալ հավատարմագրման համար պատասխանատու ՈԱԱԿ-ի համակարգողները, մասնակցել են որակի արտաքին գնահատման վերաբերյալ ամփոփիչ վերապատրաստմանը: Հանդիպման ժամանակ արձագանքներ են ստացվել ինստիտուցիոնալ ինքնավերլուծության զեկույցի սևագիր տարբերակի վերաբերյալ: Մանրամասն քննարկվել և մեկնաբանվել է զեկույցի առաջին չափանիշը:

2012թ. նոյեմբերից մինչև 2013թ. մարտը Նիդեռլանդների և Ֆլանդրիայի հավատարմագրման կազմակերպությունը (NVAO) տեխնիկական աջակցություն և ուղղորդում է ցուցաբերել ԵՊԲՀ-ի ինստիտուցիոնալ ինքնավերլուծության զեկույց գրելու վերաբերյալ: Տեխնիկական աջակցությունը, հիմնականում, իրականացվել է առցանց, բացառությամբ 2012թ. դեկտեմբերին կայացած հանդիպմանը:

1-ին փուլում (2012թ. դեկտեմբեր)՝ «Ինքնավերլուծության զեկույցը ավարտին հասցնելը» խորագրով վերապատրաստման ընթացքում քննարկումները ցույց տվեցին, որ համալսարանը, կարծես, հետադարձ կապի հիման վրա զգալի փոփոխություններ չէր իրականացրել:

2-րդ փուլում (2013թ. փետրվար) ԵՊԲՀ-ը, կարծես, հաշվի չէր առել նախկին դիտողությունները: Ընդհանուր առմամբ, տեքստն ավելի համապատասխան էր, առավել լավ ընտրված և, վերջիվերջո, ավելի համահունչ էր դիտարկվող չափանիշներին և

չափորոշիչներին: Ակնհայտորեն, դեռևս բարելավումների անհրաժեշտություն կար, սակայն առաջխաղացումը նկատելի էր:

3-րդ փուլում (2013թ. մարտ) չնայած տեքստի որակը բարելավված էր, այնուամենայնիվ, համալսարանի առկա իրավիճակի և չափանիշների բարձր հավակնությունների միջև բացը ակնհայտ էր:

ՈԱԱԿ-ի համակարգողը ողջ ընթացքում հետևում էր ինքնավերլուծության զեկույցի վերաբերյալ մեկնաբանություններին ինչպես էլեկտրոնային նամակագրության միջոցով, այնպես էլ 2012թ. դեկտեմբերին տեղի ունեցած ամփոփիչ վերապատրաստման ժամանակ: Վերջինս, փորձագիտական խմբի կազմի հաստատման ու պայմանագրի կազման գործընթացներից սկսած հետևում էր, որ փորձական ինստիտուցիոնալ հավատարմագրումն ընթանա ՈԱԱԿ-ի փորձաքննության ձեռնարկին համապատասխան:

2013թ. փետրվարի 13-ին միջազգային փորձագիտական խմբի անդամները Հաագայում հանդիպում են ունեցել՝ ինքնավերլուծական զեկույցը և այցին վերաբերող որոշ կազմակերպչական հարցեր քննարկելու նպատակով:

2013թ. մայիսի 10-ին ՈԱԱԿ-ի համակարգողը կազմակերպել է տեղացի փորձագետների առաջին հանդիպումը՝ ինքնավերլուծության զեկույցը վերլուծելու և մեկնաբանելու նպատակով: Վերլուծությունը հետագայում ներկայացվել է ողջ փորձագիտական խմբին:

2013թ. մայիսի 16-ին փորձագետները կրկին հանդիպել են՝ քննարկելու ինքնավերլուծության զեկույցը և այցի վերջնական ժամանակացույցը: ՈԱԱԿ-ը կազմակերպել է մի շարք հանդիպումներ փորձագիտական խմբի հայաստանյան անդամների հետ՝ ինքնավերլուծության զեկույցը և այցի հետ կապված որոշ խնդիրներ քննարկելու նպատակով: 2013թ. մայիսի 30-ին փորձագիտական խմբին տրամադրվել են դուրսբերված հարցերը/խնդիրները և փորձագետների մեկնաբանությունները:

Նախապատրաստական այց

2013թ. հունիսի 7-ին ՈԱԱԿ-ի ավագ և կրտսեր համակարգողները փորձագիտական խմբի անդամների հետ այցելել են համալսարան՝ վերջնականացնելու այցի օրակարգը⁴:

Այցի ընթացքում քննարկվել են կազմակերպչական, տեխնիկական ապահովվածությանը, համաժամանակյա թարգմանությանը վերաբերող հարցերը:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2013թ. հունիսի 9-ից 12-ն ընկած ժամանակահատվածում:

Այցին նախորդող օրը փորձագիտական խմբի բոլոր անդամները հավաքվել են ՈԱԱԿ-ում: Հանդիպման ընթացքում փորձագիտական խումբն իր նախնական տպավորություններն է փոխանակել զեկույցի վերաբերյալ, քննարկել և վերջնականացրել դուրսբերված հիմնական հարցերի/խնդիրների ցանկը, որոշել յուրաքանչյուր չափանիշին վերաբերող հարցերի պարզաբանման պատասխանատուին, ինչպես նաև քննարկել հանդիպումները՝ ըստ առանձին թիրախ խմբերի: Այնուհետև փորձագիտական խմբի անդամները քննարկել են գնահատման սանդղակը, որը ներառում է երկու մակարդակ՝ (1) համապատասխանում է չափանիշին, (2) չի համապատասխանում չափանիշին:

Ընդհանուր առմամբ, քննադատական մոտեցմամբ ներկայացված ինքնավերլուծության զեկույցը փորձագիտական խումբը համարեց օգտակար փաստաթուղթ՝ ԵՊԲՀ-ի հետ քննարկումներ սկսելու համար: Այնուհետև, զեկույցի որոշ հատվածներ բավականաչափ

⁴ ՀԱՎԵԼՎԱԾ 2. Ժամանակացույց

հատակ չէին, և հանդիպումների ընթացքում լրացուցիչ պարզաբանման անհրաժեշտություն ունեին:

Փորձագիտական խումբն այցելել է ԵՊԲՀ 2013թ. հունիսի 10-ից 12-ը:

Այցը մեկնարկել և ավարտվել է համալսարանի ղեկավարության հետ հանդիպումներով: Մնացած հանդիպումներն անցկացվել են կառավարման խորհրդի ներկայացուցիչների, դեկանների, ամբիոնի վարիչների, պրոֆեսորադասախոսական, ուսումնասօժանդակ և ուսանողական կազմերի ներկայացուցիչների հետ: Փորձագիտական խումբը հանդիպման մասնակիցներին ընտրել է պատահականության սկզբունքով՝ բացառությամբ ՈԱ վարչության աշխատակիցներից, որը ներկայացել էր ողջ անձնակազմով:

Ըստ օրակարգի՝ նախատեսված էր բաց հանդիպում, որին մասնակցել են համալսարանի Գիտական խորհրդի անդամները:

Փորձագիտական խումբը հաստատված օրագրագի համաձայն իրականացրել է բոլոր հանդիպումներն առանց շեղումների: Բացի տարբեր թիրախային խմբերի հետ հանդիպումներից, այցի ընթացքում փորձագիտական խումբը կատարել է փաստաթղթերի ուսումնասիրություն⁵ և ռեսուրսների դիտարկում⁶:

Տարբեր հարցազրույցների ընթացքում ձեռք բերված տեղեկատվությունն, ինչպես նաև փաստաթղթերի ուսումնասիրության և դիտարկումների հիմնական արդյունքներն ամփոփվել են այցի վերջում կազմակերպված ամփոփիչ հանդիպման ժամանակ: Փորձագիտական խումբը քննարկել է հիմնական արդյունքները և եկել ընդհանուր համաձայնության հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների պահանջների բավարարման վերաբերյալ:

Փորձագիտական խումբը գնահատում է հանդիպման մասնակիցների բաց քննարկումները, հատկապես ուսանողների հետ հանդիպումը շատ կառուցողական էր: Ավելին, կլինիկաներ կատարված այցերն, ինչպես նաև ուսանողների և անձնակազմի հետ հանդիպելու հնարավորությունը շատ օգտակար էր:

Հավատարմագրման զեկույց

Այցից հետո համակարգողը պատրաստել է հավատարմագրման զեկույցի նախնական տարբերակը և այն ուղարկել փորձագետներին: Փորձագիտական խմբի բոլոր անդամներն արձագանքել են զեկույցի յուրաքանչյուր չափորոշիչի վերաբերյալ: Փորձագետների մեկնաբանությունները հաշվի են առնվել զեկույցի ամփոփման ժամանակ: Փորձագիտական զեկույցը ներկայացնում է հիմնական արդյունքները, դատողությունները, եզրակացությունները, խորհրդատվությունը և գնահատականը: Նախնական զեկույցը ներկայացվել է համալսարան 2013թ. սեպտեմբերի 18-ին: 2013թ. սեպտեմբերի 26-ին Skype-ով քննարկում է կազմակերպվել փորձագիտական խմբի ղեկավարի, ՈԱԱԿ-ի համակարգողի և բուհի ներկայացուցիչների մասնակցությամբ: Քննարկման ընթացքում պարզաբանվեցին զեկույցում նշված շատ հարցեր:

Զեկույցը ներառում է և՛ համալսարանի փորձնական հավատարմագրման գործընթացի, և՛ գործընկերային գնահատման արդյունքները միջազգային չափանիշների համաձայն:

ԵՊԲՀ-ը զեկույցի վերաբերյալ իր մեկնաբանություններն ուղարկել է ՈԱԱԿ 09.10.2013թ-ին: Մեկնաբանությունների հիման վրա զեկույցը համապատասխանաբար վերանայվել է: Զեկույցի վերջնական տարբերակը հաստատվել է փորձագիտական խմբի կողմից 10.10.2013թ-ին: Վերջնական հաշվետվությունն ուղարկվել է համալսարան 21.10.2013թ-ին:

⁵ ՀԱՎԵԼՎԱԾ 3. Ուսումնասիրված փաստաթղթերի ցանկ

⁶ ՀԱՎԵԼՎԱԾ 4. Ուսումնական հարմարությունների ցանկ

IV. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

Երևանի պետական բժշկական համալսարանը բարձրագույն կրթական և գիտական հաստատություն է, որի գործունեությունն ուղղված է դեղագործական, սոցիոլոգիական, հումանիտար, կրթական և հիմնական գիտահետազոտական ոլորտներում կրթության տրամադրմանը միջին, բարձրագույն և հետբուհական մակարդակներում՝ սահմանված ընթացակարգերին և կրթական ծրագրերին համապատասխան:

ԵՊԲՀ-ի առաքելությունն է կրթել և պատրաստել մասնագետներ, իրականացնել հետազոտական աշխատանքներ առողջապահության ոլորտում՝ հասարակության պահանջմունքները բավարարելու համար: 2006 թվականին, համաձայն «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին ՀՀ օրենքի»՝ ԵՊԲՀ-ում հաստատվեց բարձրագույն կրթության երկաստիճան համակարգ: Բժշկության ոլորտում այս անցումը հիմնված էր կրթական ծրագրերի վերաբաշխման վրա այնպես, որ բժշկական առողջապահական համակարգում բակալավրի ուսանողները նախաբժշկական ծառայություններում հանդես գան որպես ավելի բարձր որակավորմամբ մասնագետներ: Երկաստիճան կրթության պահանջներին համահունչ լինելու նպատակով բակալավրի և մագիստրատուրայի բոլոր կրթական ծրագրերը վերանայվել են և հաստատվել՝ սկսած 2006 թվականից:

Որոշումների կայացման կանոնակարգված ընթացակարգը հաստատված է համալսարանի կառավարման համակարգի միջոցով: Կառավարման մարմինը համալսարանի խորհուրդն է՝ կազմված 32 անդամներից: Համալսարանի ռեկտորի կողմից ղեկավարվող Գիտական խորհուրդը ուսումնակրթական, գիտական և տեխնիկական աշխատանքները կարգավորող և համակարգող կառավարման մարմինն է, որտեղ առնվազն 25%-ն ուսանողներ են, իսկ պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները կազմում են մեծամասնություն: Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումներն են գիտական կենտրոնները, ֆակուլտետները, ռազմաբժշկության ֆակուլտետը, կլինիկաները, բաժինները, քոլեջը, ամբիոնները, ակադեմիական գրադարանը, տպարանը, կրթական տեղեկատվական բազաները և այլ միավորներ:

Ներկայումս համալսարանի յոթ ֆակուլտետներում ուսանում է 5500 ուսանող, որոնցից 1140-ը արտասահմանցիներ են: Համալսարանի կառուցվածքում ներառված է մոտ 100 կրթական ստորաբաժանում, որտեղ իրականացվում են կրթական և գիտական աշխատանքներ: Դասավանդման, գիտական և կլինիկական աշխատանքներում ներգրավված աշխատակազմի ներկայացուցիչների թիվը կազմում է 1100, որոնցից 162-ը բժշկության ոլորտի դոկտոր/գիտությունների թեկնածուներ են, 80-ը՝ պրոֆեսորներ:

2006-2011թթ. համալսարանում գործել է ինստիտուցիոնալ բարեփոխումների և ինտեգրման քաղաքականությունների բաժինը: 2011թ. մայիսին ստեղծվեցին Որակի գնահատման և ապահովման կենտրոնը, ինչպես նաև մշտական հանձնաժողովն ու համապատասխան ֆակուլտետային հանձնաժողովները: Մշակվեցին կենտրոնի քաղաքականությունն ու ռազմավարությունը, ինչպես նաև կանոնակարգերն ու ընթացակարգերը, որոնք ուղղված էին համալսարանի տարբեր միավորների կողմից իրականացվող աշխատանքների որակի գնահատմանը:

ՉԱՓԱՆԻՇ I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ:

1.1 ԵՊԲՀ-ն ունի հստակ ձևակերպված առաքելություն, որում արտացոլված են ՄՈՒՀ-ի հավակնությունները, նպատակներն ու խնդիրները: 2006թ. ԵՊԲՀ-ում ձևավորվել է բարձրագույն կրթության երկաստիճան համակարգը, որի կրթական ծրագրերը լրամշակվել են են՝ հնարավորություն տալով բակալավրի շրջանավարտներին իրականացնել մասնագիտական գործունեություն առողջապահական համակարգի նախաբժշկական ծառայությունում:

Ներկայումս բակալավրի բուժական գործ կրթական ծրագիրը հաստատվել է կառավարության կողմից՝ որպես նեղ մասնագիտական չափորոշիչ: Մագիստրատուրայի կրթական ծրագրի հաստատումը վերջնական փուլում է: Նկատվում է բոլոր ծրագրերը ՀՀ ՈԱՇ-ին համապատասխանեցնելու անհրաժեշտություն հետագա աշխատանքներում:

ԵՊԲՀ-ի ուսումնական և մեթոդական հանձնաժողովները ներկայումս կրթական ծրագրերի բարելավմանն ուղղված վերլուծություններ են իրականացնում: Ոսուցումը կազմակերպելու համար վերանայվել են առարկայական ծրագրերը՝ օգտագործելով ինտեգրման հորիզոնական և ուղղահայաց տարրեր:

1.2 Համալսարանի ռազմավարական ծրագիրը մշակվել է՝ այն նախապես քննարկելով համապատասխան ստորաբաժանումների և հանձնաժողովների հետ: Այնուհետև ռազմավարական ծրագիրը ներկայացվել է համալսարանի կառավարման և գիտական խորհուրդների քննարկմանը և հաստատմանը: Այդ խորհուրդներում ընդգրկված են ինչպես ներքին /վարչակազմ, ամբիոնի վարիչներ, պրոֆեսորադասախոսական կազմ, ուսանողներ, կլինիկական անձնակազմ/, այնպես էլ արտաքին /առողջապայության ոլորտի և կառավարության ներկայացուցիչներ/ շահակիցներ: Ներքին և արտաքին շահակիցների կարիքները բացահայտելու նպատակով համալսարանն այժմ մշակում է հետադարձ կապի նոր մեխանիզմներ՝ շահակիցների առավել ընդգրկուն և արդյունավետ ներգրավվածությունն ապահովելու համար:

1.3 Համալսարանի կառավարման և գիտական խորհուրդները, վարչական և ուսումնական ստորաբաժանումները⁷ գործում են հաստատված կանոնակարգերին համապատասխան: Համալսարանի համապատասխան հանձնաժողովները փորձում են գնահատել առաքելության և նպատակների իրականացման արդյունքները նորովի մշակված մեխանիզմների և ընթացակարգերի միջոցով:

⁷ ՀԱՎԵԼՎԱԾ 5. ԵՊԲՀ վարչական կառուցվածք

Համալսարանում գործող որակի գնահատման և ապահովման կենտրոնը, որը ստեղծվել է 2011 թվականին, պարբերաբար անցկացնում է հարցումներ՝ տարբեր ստորաբաժանումների գործունեության արդյունավետությունը գնահատելու և վերլուծելու նպատակով:

Համալսարանի ստորաբաժանումները (ամբիոններ, կենտրոնական և ցիկլային-մեթոդական հանձնաժողովներ, ֆակուլտետային գիտխորհուրդներ, դեկանատներ, գիտակոորդինացիոն խորհուրդ, փորձագիտական հանձնաժողովներ, էթիկայի կոմիտե, ուսանողական խորհրդարան, ուսանողական դեկանատներ) մասնակցում են համալսարանի առաքելության և նպատակների մշակման ու գնահատման, ինչպես նաև բուհի գործունեության բարելավմանն ուղղված աշխատանքներին:

ԴՍՏՈՂՈՒԹՅՈՒՆ

ԵՊԲՀ-ի ռազմավարական պլանում ներկայացված առաքելությունը և տեսլականը հստակ են և իրագործելի: Առաջիկա հինգ տարիների ընթացքում համալսարանը նպատակադրված է անդամակցել Եվրոպական բարձրագույն կրթության տարածքին (ԵԲԿՏ): Համալսարանի առաքելության և գործունեության միջև առկա է համապատասխանություն, սակայն դեռևս ոչ լիարժեք: Բուհն իր կրթական ծրագրերը համապատասխանեցրել է ՀՀ ՈԱԾ-ին: Փորձագիտական խումբը համոզվել է, որ կրթական ծրագրերը համահունչ են դուբլինյան նկարագրիչներին և ՈԱԾ-ին, չնայած դա արտահայտված չէ դուբլինյան նկարագրիչների մակարդակում: Ընթացքի մեջ է բոլոր ծրագրերի պետական հաստատումը:

Ինքնավերլուծության զեկույցից պարզ չէ, թե ինչպես են աշխատաշուկայի պահանջներն իրականում հաշվի առնվել ծրագրերի մշակման գործընթացում: ԵՊԲՀ-ը կարևորում է ուսումնառության արդյունքների և նոր կրթական ծրագրերի գնահատման ուղղությամբ հետազոտության իրականացումը, որի նպատակն է համապատասխանեցնել կրթական ծրագրերը Բոլոնիայի գործընթացի շրջանակներում, իսկ ուսումնառության արդյունքները՝ աշխատաշուկայի պահանջներին, հատկապես բակալավրի մակարդակում:

ԵՊԲՀ-ը քաջատեղյակ է, որ աշխատաշուկայի պահանջներն ուսումնասիրելու և դրանք կրթական ծրագրերին արդյունավետորեն կապակցելու անհրաժեշտություն կա: Փորձագիտական խումբը չնայած գիտակցում է ներկայումս առկա աշխատողների զբաղվածության խնդիրը, և այս դրությունը ավելի է դժվարեցնում ԵՊԲՀ-ի և ՀՀ այլ բուհերի իրավիճակը՝ այդ նույն աշխատաշուկայի պահանջները բավարարելու առումով: Հետևաբար, լրացուցիչ ջանքեր են անհրաժեշտ գործատուներին և շրջանավարտներին ներգրավելու համար:

Ակնհայտ է, որ ԵՊԲՀ-ն այժմ անցումային փուլում է: Ինքնավերլուծության գործընթացի արդյունքում համալսարանը բացահայտեց, որ դեռևս չկա իր առաքելության և նպատակաների գնահատման կանոնակարգված և ընթացակարգային մոտեցում, չնայած իրականացվում են համապատասխան զարգացումներ: Հետևապես, փորձագիտական խումբը համոզված է, որ ԵՊԲՀ-ը կկարողանա իրագործել առաքելությունը, նպատակները ռազմավարության հաջորդ փուլում (ԵՊԲՀ-ի ռազմավարական պլան 2011-2017):

Եզրահանգում: Ընդհանուր առմամբ փորձագիտական խումբը գտնում է, որ ԵՊԲՀ-ն ունի լավ կառուցվածք և հստակ սահմանված առաքելություն: Խմբին տրամադրվել են բավարար հիմքեր ներքին շահակիցների ներգրավման վերաբերյալ, սակայն արտաքին շահակիցների

մասնակցությունը թվում է սահմանափակ տարբեր հանձնաժողովների համար: Արտաքին կապերն ու հաղորդակցությունը հիմնականում ոչ ֆորմալ բնույթ են կրում: Հետևապես, արտաքին շահակիցների ներդրումը որոշ չափով բացակայում է:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ԵՊԲՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 1-ի պահանջներին բավարար է:

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Անհրաժեշտ է՝

- ապահովել համալսարանի նախանշված հավակնությունների, քաղաքականության և գործունեության միջև համապատասխանությունը՝ հաշվի առնելով առկա ռազմավարությունը, որն ուղղված է ԵԲԿՏ ինտեգրմանը,
- ուշադրություն դարձնել արտաքին կազմակերպությունների հետ արդյունավետ համագործակցության հաստատմանը՝ կրթական ծրագրերի ուսումնառության արդյունքների և աշխատաշուկայի պահանջների միջև համապատասխանությունն ապահովելու նպատակով,
- մշակել մեխանիզմներ կրթական գործընթացում շահակիցների արդյունավետ ներգրավվածությունն ապահովելու համար
- ընդլայնել արտաքին շահակիցների ներգրավվածության և ազդեցության հնարավորությունները,
- սահմանել համալսարանի առաքելության և նպատակների գնահատման առավել կառուցվածքային մոտեցում, վերհանել ցուցանիշներ և նշանակել պատասխանատուներ գնահատման և բարելավումների զարգացման գործընթացի ի իրականացման համար:

ՉԱՓԱՆԻՇ II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործունեությունը արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ:

2.1 Համալսարանի կառավարումն իրականացվում է ՀՀ օրենսդրությանը և ԵՊԲՀ-ի կանոնադրությանը համապատասխան, ինքնակառավարման հիման վրա՝ միանձնյա ղեկավարման և կոլեգիալության սկզբունքների գույակցմամբ, համալսարանի խորհրդի, գիտական խորհրդի և ռեկտորատի կանոնակարգված գործառույթների իրականացմամբ:

Համալսարանի խորհուրդը կազմված է համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողության, հիմնադրի և լիազոր մարմնի 8-ական ներկայացուցիչներից և գործում է ըստ հաստատված կանոնակարգի: Համալսարանի գիտական խորհուրդը ռեկտորի նախագահությամբ գործող ուսումնական, գիտական և գիտատեխնիկական

գործունեությունը համակարգող ու կարգավորող կառավարման մարմին է, որի անդամների առնվազն 25 տոկոսը ուսանողներն են:

Համալսարանի ղեկավարումն իր իրավասության սահմաններում և ԵՊԲՀ-ի կանոնադրությանը համապատասխան իրականացնում է ռեկտորը: Ֆակուլտետի կառավարման մարմիններն են ֆակուլտետի խորհուրդը և ղեկանատը:

ԵՊԲՀ-ի կառավարման համակարգում ձևավորվել է համալսարանի ավանդույթների վրա հիմնված կոլեգիալ միջավայր և համագործակցության մշակույթ: Որոշումները կայացվում են կանոնակարգված գործընթացի համաձայն, սակայն կառավարման էթիկայի առանձին կանոններ սահմանված չեն:

ԵՊԲՀ-ն ունի սահմանափակ ռեսուրսներ կրթական, գիտական, կազմակերպական և կառավարման կարիքները բավարարելու համար: Չի իրականացվել որևէ վերլուծություն՝ առանձին կրթական ծրագրերի իրականացման արդյունավետությունը վերհանելու համար: Ինքնավերլուծության զեկույցում շեշտադրումը չափազանց շատ է բժշկական ծրագրի վրա, և առաջարկվող այլ ծրագրերի (դեղագործություն, ստոմատոլոգիա, հանրային առողջություն) կառուցվածքային նկարագրությունը բացթողնված է:

2.2 Դասախոսների և ուսանողների մասնակցությունը որոշումների կայացման գործընթացում ապահովվում է նախ և առաջ կառավարման բոլոր մարմիններում համապատասխան շահակիցների ներկայացուցչությամբ: Ուսանողների իրավունքների և շահերի պաշտպանությամբ զբաղվող կառույցը ուսանողական խորհրդարանն է: Այն ապահովում է ուսանողների մասնակցությունը հաստատության կառավարման մարմիններում և քննարկում ուսանողներին վերաբերող խնդիրները: Խորհրդարանի նախագահը ռեկտորատի և գիտխորհրդի անդամ է:

2.3 Համալսարանը մշակել է 2011-2017թթ. ռազմավարական պլանը և գործում է իր երկարաժամկետ պլանավորմանը համապատասխան: Կարճաժամկետ և միջնաժամկետ պլանների կազմումն ու մշտադիտարկումը կատարվում են համալսարանի ղեկավարության, ինչպես նաև համապատասխան ստորաբաժանումների և հանձնաժողովների ղեկավարների կողմից: Մշտադիտարկումը կատարվում է.

- դասալսումների և գործնական դասընթացների միջոցով,
- պրոֆեսորադասախոսական կազմի ատեստավորմամբ,
- տարեկան հաշվետվություններով և դրանց վերլուծություններով, որոնք ներկայացվում են ամբիոնների և ստորաբաժանումների ղեկավարների կողմից,
- արտաքին և ներքին շահակիցների միջև հարցումների անցկացմամբ և համապատասխան վերլուծությունների իրականացմամբ,
- հանդիպումների և ֆոկուս խմբերի կազմակերպմամբ:

Մշտադիտարկման արդյունքներն օգտագործվում են՝ վեր հանելու իրականացման գործընթացի արդյունավետությունը և բարելավելու պլանավորումը:

2.4 ԵՊԲՀ-ի վարչական անձնակազմը, ստորաբաժանումների ղեկավարները և որակի գնահատման և ապահովման կենտրոնը պարբերաբար ուսումնասիրում են այն գործոնները, որոնք ազդում են համալսարանի գործունեության վրա, սակայն այդ գործընթացը դեռևս չի ներառում տեղեկատվություն արտաքին գործոնների կամ արտաքին շահակիցների

արձագանքների վերաբերյալ: ԵՊԲՀ-ը վերլուծում է այն գործոնները, որոնք ազդում են համալսարանի գործունեության վրա՝ հիմք ընդունելով.

- ռեկտորի տարեկան հաշվետվությունների, ստորաբաժանումների ղեկավարների, մասնավորապես ուսանողների ակադեմիական առաջադիմությանը վերաբերող նյութերը,
- ստորաբաժանումների կողմից իրականացված մշտադիտարկումների արդյունքները,
- արտաքին և ներքին շահակիցների միջև անցկացված հարցումները,
- համալսարանի կայքի միջոցով վարչական անձնակազմի (ռեկտոր, պրոռեկտոր)՝ ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի հետ մշտական կապը,
- վարչական անձնակազմի (ռեկտոր, պրոռեկտոր)՝ ուսանողների, պրոֆեսորադասախոսական կազմի և արտաքին շահակիցների հետ շաբաթական մեկ անգամ կազմակերպվող մշտական հանդիպումները:

Համալսարանում հարցումներ անցկացնելը նոր գործընթաց է, և դեռևս բացակայում են հետադարձ կապի մեխանիզմներին վերաբերող բավարար հիմքերը: Բուհում դեռևս չի իրականացվում տվյալների հավաքագրման ինտեգրացված գործընթաց, որը թույլ կտա դուրս բերել ցուցանիշներ համալսարանի գործունեության հետագա առաջընթացն արձանագրելու համար:

2.5 Քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունը որակի կառավարման սկզբունքով իրականացնելու համար վերջերս ձևավորված մեխանիզմների կիրառումը նոր գործընթաց է, հետևապես մեխանիզմները դեռևս լիովին չեն գործում: Այնուամենայնիվ, Որակի գնահատման և ապահովման կենտրոնի ստեղծումը վկայում է, որ ձևավորվել է համակարգ, չնայած դեռևս շատ վաղ է արձանագրել հստակ արդյունքներ: Նախորդ ռազմավարական ծրագրի մշակման արդյունավետության գնահատում չի իրականացվել: Արդյունքում դա չէր կարող հաշվի առնվել նորը մշակելու գործընթացում: Որակի ապահովման պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում շրջափուլը, հետևաբար, ավարտված համարել չի կարելի:

2.6 Մինչ 2011թ. Որակի գնահատման և ապահովման կենտրոնի ստեղծումը կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկության հավաքագրումը, վերլուծությունը և այլ գործընթացներն իրականացվում էին մեթոդական ստորաբաժանումների, ինչպես նաև Բարեփոխումների և ինտեգրման բաժնի կողմից, որոնք օգտագործում էին տարբեր տեղեկատվական աղբյուրներ.

- ռեկտորի և համապատասխան ստորաբաժանումների ղեկավարների հաշվետվություններ,
- ուսանողների ակադեմիական առաջադիմության ամփոփում,
- ստորաբաժանումների աուդիտների արդյունքներ,
- արտաքին և ներքին շահակիցների շրջանում իրականացված հարցումների արդյունքների վերլուծություն,
- ուսանողների, դասախոսների, արտաքին շահակիցների հետ համալսարանի ղեկավարության հանդիպումների ընթացքում բարձրացված հարցերի վերլուծություն,
- համալսարանի գործունեությանը վերաբերող տպագիր և էլեկտրոնային հրապարակումների վերլուծություններ:

Ներկայումս բուհում առկա են տարբեր աշխատանքների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման բազմազան մեխանիզմներ: Նպատակն է ձևավորել տեղեկատվության հավաքագրման ինտեգրացված համակարգ:

2.7 Համալսարանի կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի վերաբերյալ հրապարակումների գնահատումները կատարվում են հասարակայնության հետ կապերի պատասխանատուների կողմից տպագիր և էլեկտրոնային մամուլում առկա հրապարակումների վերլուծությունների միջոցով: Ինստիտուցիոնալ մակարդակով չեն կատարվել վերլուծություններ արտաքին բենչմարքինգի ուղղությամբ: Այն իրականացվում է ամբիոնների մակարդակում:

ԴԱՏԱՂՈՒԹՅՈՒՆ

Բուհի բազմամակարդակ կառավարման համակարգն ապահովում է որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց, սակայն հստակ չէ այդ գործընթացի արդյունավետությունը: Կազմակերպական կառուցվածքը բավականին խրթին է, քանի որ շատ հանձնաժողովներ զբաղվում են որոշակիորեն միևնույն հարցերով: Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը փաստում է, որ ստեղծվել է որոշակի կապ կառավարման և որակի ապահովման միջև: Ակնհայտորեն անհրաժեշտ է հետագայում ամրապնդել այս կապը , սակայն առաջին արդյունքները խոստումնալից են:

Բացակայում են նյութական և ֆինանսական ռեսուրսների բաշխման հստակ մեխանիզմներ, տարբեր կրթական ծրագրերի իրականացման համար: Անհրաժեշտ ռեսուրսների հաշվարկումն ու բաշխումը կատարվում են սահմանված պահանջների և դեկանների ու ստորաբաժանումների դեկավարների կարիքների հիման վրա: Համալսարանի կառավարման համակարգը պրոֆեսորադասախոսական կազմին և ուսանողներին հնարավորություն է տալիս ներգրավվել կառավարման տարբեր խորհուրդներում, սակայն ներքին շահակիցների մասնակցության արդյունավետությունը չի գնահատվում կանոնավոր կերպով:

Համալսարանի կառավարման կառուցվածքը բազմաշերտ է, որում կրթական ծրագրերի և այլ գործընթացների վերաբերյալ տեղեկատվությունը դեռևս համակարգված չէ ինստիտուցիոնալ մակարդակում: Բացի այդ, դրա կիրառումը գնահատող մեխանիզմները և տեղեկատվության վերլուծությունները բարելավման կարիք ունեն: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ որոշ ստորաբաժանումներ գործում են բավականին արդյունավետ համալսարանի ներկայիս անցումային փուլում անհրաժեշտ փոփոխություններ կատարելու համար:

Եզրահանգում: Հաշվի առնելով բոլոր հիմքերը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ չափանիշ 2-ը համապատասխանում է պահանջներին, սակայն խումբն ունի որոշ դիտարկումներ.

1. Անհրաժեշտ է պահպանել հատկապես ուսանողների ներգրավվածությունը բոլոր մակարդակներում : Ուսանողների ձայնը լսելի է, և նրանք որոշումների կայացման գործընթացում ունեն որոշակի ազդեցություն: Աշխատակազմը նույնպես ներառված է որոշումների կայացման բոլոր մակարդակներում: Ներքին շահակիցների (դասախոսներ և

- ուսանողներ) հետ կապը բավարար է, սակայն, ինչպես արդեն նշվել է, որոշ թերություններ կան արտաքին շահակիցների (այցելուներ, մասնագիտական ոլորտ, շրջանավարտներ) հետ համագործակցության ապահովման ուղղությամբ,
2. Տվյալների հավաքագրման մեխանիզմը ներդրված է, սակայն այն դեռևս լիովին մշակված չէ, հետևապես տվյալներն ամբողջապես ներառված չեն,
 3. Ծրագրերի որակի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման ներքին կառուցվածքը որպես այդպիսին բավականին խրթին է: Բուհում կան գործող շատ հանձնաժողովներ ու խորհուրդներ, ուստի փորձագիտական խումբը խորհուրդ է տալիս կազմակերպումն ավելի արդյունավետ և ուղղակի դարձնել:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ԵՊԲՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 2-ի պահանջներին բավարար է:

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Անհրաժեշտ է՝

- պարզեցնել համալսարանի կառուցվածքը, բարձրացնել կառավարման համակարգի արդյունավետությունը սահմանված մեխանիզմների միջոցով,
- մշակել կամ բարելավել մեխանիզմները կարճաժամկետ և միջնաժամկետ պլանավորման, ինչպես նաև մշտադիտարկման համար համալսարանի առաքելությանը և նպատակներին համապատասխան,
- մշակել ցուցանիշներ, որոնք թույլ կտան «ախտորոշել» գործոնների հետագա ազդեցությունը համալսարանի գործունեության բոլոր ոլորտների վրա՝ ակտիվ ներգրավելով արտաքին շահակիցներին և հաշվի առնելով նրանց արձագանքները որոշումների կայացման գործընթացներում,
- կիրառել որակի կառավարման սկզբունքը մեխանիզմների մշակման գործընթացում՝ ընթացակարգերի և քաղաքականության կառավարման նպատակով,
- բարելավել համալսարանի կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության, դրանց վերլուծությունների և կիրառման վերաբերյալ տվյալների հավաքագրման գնահատման մեխանիզմները՝ օգտագործելով ինտեգրացված թվայնացված համակարգ:

ՉԱՓԱՆԻՇ III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ:

3.1 Մասնագիտության կրթական ծրագրերը համահունչ են համալսարանի առաքելությանը: Ուսումնառության ակնկալվող արդյունքները սահմանվել են՝ հիմք ընդունելով ունենալով

ինչպես համալսարանում դասավանդման ավանդական փորձը, այնպես էլ որոշ այլ երկրներում մշակված ծրագրերը: Ուսումնական պլանները և կրթական ծրագրերին համապատասխան առարկայական ուղեցույցներն արտացոլում են տեսական գիտելիքների և գործնականում կիրառվող հմտությունների համակցությունը: Որպես այդպիսին՝ դրանք տիպային ուսումնական պլաններ են:

3.2 ՄՈՒՀ-ում գործում է դասավանդման և քննությունների անցկացման ավանդական /դասախոսակենտրոն/ մոտեցումը, ինչն ապահովում է այդ գործընթացների համահունչությունը: ՄԿԾ-ների մշակման և ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականությունը դեռևս չի նպաստում լիարժեք ուսանողակենտրոն ուսուցման համակարգի ձևավորմանը: Դասավանդման արդյունավետ մեթոդների ընտրության հարցում որոշակի դեր են կատարում ուսանողների և շրջանավարտների շրջանում իրականացվող հարցումները:

3.3 Կրթական ծրագրերի իրականացման արդյունավետությունը, ուսանողների գնահատման գործընթացի անկողնակալության և թափանցիկության հարցերը վերլուծվում են ֆակուլտետների դեկանների, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի, Որակի գնահատման և ապահովման կենտրոնի կողմից: Արդյունքները քննարկվում և զեկուցվում են ֆակուլտետային և գիտական խորհուրդներում: Վերոհիշյալ հարցերը ներառված են նաև արտաքին և ներքին շահակիցների հետ քննարկումներում և հարցումներում: Արդյունքների հիման վրա իրականացվում է ուսանողների գնահատման քաղաքականության և ընթացակարգերի բարելավման գործընթաց և միտված է ակադեմիական ազնվության ապահովմանը:

Ակադեմիական անկողնակալությունն ապահովվում է հետևյալ եղանակներով.

- կիսամյակային գրավոր և թեստային քննություններ,
- քննական գործընթացի մշտադիտարկում հեռահար եղանակով և տեսաձայնագրության համակարգի միջոցով: Քննությունների արդյունքների բողոքարկումն իրականացվում է ուսանողական խորհրդարանի ներկայացուցչի մասնակցությամբ, ինչը նպաստում է ակադեմիական ազնվությանը,
- որպես փորձարկվող նախագիծ՝ 1-ին կուրսի ուսանողների քննություններն անցկացվում են համակարգչային եղանակով,
- ուսանողների ավարտական ատեստավորումն իրականացվում է ավարտական բանավոր քննությունների միջոցով՝ համաձայն կառավարության կողմից հաստատված կարգի,
- համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ 2012-2013թթ. ուստարում մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողների քննությունները ևս կանցկացվեն բանավոր եղանակով:

3.4 Ինքնավերլուծության ուսումնասիրությունը և փորձագիտական այցը ցույց տվեցին, որ ՄԿԾ-ները բովանդակային առումով համահունչ են նախկին ԽՍՀՄ նմանատիպ այլ ծրագրերին: Սակայն դեռ բացակայում են համալսարանի ուսանողների ու դասախոսների

շարժունությունը և միջազգայնացումը խթանող հիմքերը, քանի որ դեռևս ներդրված չեն համապատասխան մեխանիզմներ:

Մի շարք ուսումնական պլաններ և ծրագրեր թարգմանված են անգլերեն և ռուսերեն, իսկ դասավանդումը մագիստրոսական /MD/ ծրագրերի համար իրականացվում է 3 լեզուներով: Համալսարանը վարում է պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության քաղաքականություն՝ հաշվի առնելով նրանց օտար լեզվի իմացության անհրաժեշտ շեմը: Համալսարանը մասնակցում է միջազգային կրթական ծրագրերին (DIUSAS, PIQA, TEMPUS, Erasmus-Mundus), որոնք նպաստում են համալսարանի միջազգայնացմանը:

3.5 2011 թվականին համալսարանի Որակի գնահատման և ապահովման կենտրոնի կողմից մշակվել է կրթական ծրագրերի տարեկան մշտադիտարկման ընթացակարգը: Համալսարանում կան համապատասխան ստորաբաժանումներ, որոնք պատասխանատու են կրթական ծրագրերի մշակման, գնահատման և բարելավման համար:

Առկա են նաև որոշ մեխանիզմներ (ամբիոնի նիստեր – ցիկլային մեթոդական հանձնաժողով – կենտրոնական մեթոդական հանձնաժողով – ԵՊԲՀ գիտական խորհուրդ), որոնց միջոցով մշտադիտարկվում և վերանայվում են կրթական ծրագրերը: Հետևյալ գործիքներն օգտագործվում են այդ նպատակով՝ հարցումների անցկացում արտաքին և ներքին շահակիցների շրջանում, մասնագիտական և գիտական համաժողովներ, նախանշված կրթական նպատակներին առնչվող ուսումնառության արդյունքների գնահատում:

Հիմնվելով ուսումնառության արդյունքների գնահատման վրա, որոնք արտացոլվում են ֆակուլտետի ղեկանի, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի և ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի զեկույցներում, ֆակուլտետային գիտական խորհուրդները որոշումներ են ընդունում կրթական ծրագրերի բարելավման վերաբերյալ: Արդյունքում նոր առարկաներ կարող են ավելացվել կամ հանվել ուսումնական ծրագրերից:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ

ԵՊԲՀ-ի ծրագրերը ավանդական են՝ լավ և մանրամասն ձևակերպված ուսումնառության արդյունքներով:

ԵՊԲՀ-ի կրթական ծրագրերը բնութագրվում են ավանդական այն առումով, որ դրանք մոնոդիսցիպլինար են և դասախոսակենտրոն: Դասախոսությունները դասավանդման հիմնական գործիքներն են: Դասավանդման և ուսումնառության ներկա գործընթացը հիմնված է դասախոսակենտրոն մոտեցման վրա, որը համապատասխանում է համալսարանի առաքելությանը: Համալսարանն իհարկե խրախուսում է դասավանդման ավելի ժամանակակից մոտեցումը, բայց դեռևս չկա հստակ սահմանված քաղաքականություն ուսանողակենտրոն ուսուցումը խրախուսող դասավանդման և ուսումնառության ժամանակակից մեթոդների կիրառման ուղղությամբ:

Ուսանողների գնահատումը ամփոփիչ է և ուղղված է տեսական գիտելիքի գնահատմանը: Գնահատման գործընթացներն ավանդական են, նկարագրված և թափանցիկ: Ուսանողները տեղյակ են թեստային ծրագրի մասին:

ԵՊԲՀ-ի սակավ ուսանողներ և դասախոսներ են մասնակցում փոխանակման ծրագրերին: Փաստացի, ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի շարժունության և միջազգայնացման մակարդակը համարվում է ցածր:

Կան համապատասխան ստորաբաժանումներ, որոնք պատասխանատու են ծրագրերի մշակման, գնահատման և բարելավման համար, սակայն արդյունավետության գնահատման, ինչպես նաև այլ ստորաբաժանումների հետ նրանց համագործակցության ձևերի քաղաքականությունը դեռևս հստակ չէ:

Եզրահանգում: Ըստ փորձագիտական խմբի՝ բոլոր ֆակուլտետներն առաջարկում են մանրամասն և առանձին դասընթացների վրա հիմնված լավ կառուցված ուսումնական պլաններով կրթական ծրագրեր: Ուսումնառության ակնկալվող արդյունքները սահմանված են բոլոր ծրագրերի համար: Դասավանդման և ուսումնառության մեթոդն ավանդական է և համահունչ է ավանդական, դիսցիպլինար և դասախոսակենտրոն ուսումնական պլաններին:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ԵՊԲՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 3-ի պահանջներին բավարար է:

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Անհրաժեշտ է՝

- հաշվի առնել բազմադիսցիպլինար թեմատիկ մոտեցումը ծրագրերի համար,
- իրականացնել սահմանված քաղաքականությունը դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության ուղղությամբ, որը կնպաստի ուսանողակենտրոն ուսուցմանը՝ հաշվի առնելով ուսանողների ինտերակտիվ մասնակցության կարևորությունը և փոքր խմբերով ուսուցումը,
- բարելավել ծրագրի արդյունավետության գնահատման քաղաքականությունը
- ամրապնդել կապը ուսուցման և հետազոտության միջև:

ՉԱՓԱՆԻՇ IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.

4.1 Ուսանողների ընդունելությունն իրականացվում է ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգի համաձայն: Ըստ կարգի՝ դիմորդը քննություն հանձնելու համար կարող է ընտրել 3 մասնագիտական առարկաներից՝ ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն: Քննությունն անցկացվում է միասնական կարգով: Այդ քննությունների գումարային արդյունքները հաշվի են առնվում, երբ դիմորդը մասնակցում է ՀՀ ընդունող հանձնաժողովի կողմից կազմակերպված ընդունելության մրցույթին:

Յուրաքանչյուր տարի անվճար կարգով (պետության կողմից վճարվող) համալսարան ընդունվող ուսանողների ընդհանուր միջին թիվը կազմում է 95, իսկ վճարովի համակարգով ուսանողներինը՝ 490: Սակայն, վերջին 5 տարիների ընթացքում, որդեգրելով ընդունելության դյուրինացման քաղաքականությունը, համալսարանը նախապես դիմում է ԿԳ

նախարարություն՝ միջինը 150 լրացուցիչ դիմորդի ընդունելության թույլատվություն ստանալու համար:

Դյուրին դարձնելով ընդունելությունը և հետևապես մեծացնելով առաջին կուրսի ուսանողների թիվը՝ բուհում, այնուամենայնիվ, չի ավելացել շրջանավարտների թիվը, որովհետև քննաշրջաններն անհաջող հանձնած և ուսումը չշարունակելու ենթակա ուսանողների թիվը գրեթե 1,5 անգամ մեծացել է: Ի տարբերություն տեղացի ուսանողների՝ օտարերկրյա ուսանողների ընտրության գործընթացում համալսարանն ունի ինքնավարություն (օրինակ, հնդիկ ուսանողների ընտրությունը կատարվում է համալսարանի համապատասխան հանձնաժողովի կողմից):

4.2 Համալսարանն ուսանողների շրջանում անցկացնում է հարցումներ՝ պարզելու նրանց կարծիքը ուսումնական ռեսուրսներով ապահովվածության, դրանց արդյունավետության, գործող գնահատման համակարգերի նպատակահարմարության, ինչպես նաև կրթական ծրագրերի ու դասավանդման արդյունավետության գնահատման մշակված մեթոդների վերաբերյալ: Ուսանողների, դեկանների և ամբիոնի վարիչների հետ հանդիպումների ընթացքում արծարծված խնդիրները քննարկվում են ամեն կիսամյակում գործնական խորհրդատվությունների ժամանակ, և համապատասխանաբար տրվում են լուծումներ:

ԵՊԲՀ-ի կայքում առկա է քննարկումների ֆորում, որն ապահովում է ռեկտորի և ուսանողների միջև կապը: Այն նաև տիրույթ է, որտեղ մի շարք հարցեր, առաջարկություններ և լուծումներ են առաջադրվում համալսարանի ղեկավարման տարբեր օղակների կողմից:

4.3 Համալսարանում առկա են ուսանողների համար լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և պրոֆեսորադասախոսական կազմի կողմից խորհրդատվությունների տրամադրման բազմաթիվ ձևեր և կարգեր: Բոլոր ամբիոններում կան գործողությունների ժամանակացույցեր, համաձայն որոնց՝ դասախոսն ուսանողներին տրամադրում է խորհրդատվություններ ողջ կիսամյակի և քննաշրջանի ընթացքում առաջադրված խնդիրների վերաբերյալ: Ուսանողները կամըտրական առարկաներն ընտրելիս խորհրդակցում են դասախոսների հետ նախքան կլինիկական օրդինատուրայի մեկնարկը , որի դեպքում իրենց ընտրած մասնագիտության շրջանակում պետք է ընտրեն տրված 8 կամընտրական առարկաներից 4-ը:

4.4 ԵՊԲՀ-ն ուսանողների համար սահմանել է ժամանակացույց վարչական կազմին դիմելու համար՝ այդպիսով տեղեկացնելով նրանց և տրամադրելով աջակցություն և ուղղորդում : Ռեկտորը նույնպես հանդիպումներ է ունենում ուսանողների հետ կիսամյակը մեկ կամ երկու անգամ և պատասխանում է նրանց հարցերին: Դեկանները իրականացնում են խորհրդատվություններ բոլոր ֆակուլտետների համար կիսամյակը մեկ կամ երկու անգամ, ամբիոնի վարիչները կամ այլ ներկայացուցիչներ նույնպես ներգրավված են այդ գործընթացում: Ուսանողական դեկանատը կազմավորվել է ամեն ֆակուլտետի խորհրդում: Այն համալսարանի ղեկավարությանն է ներկայացնում ուսանողներին հուզող հարցերը:

4.5 Շրջանավարտների կապն աշխատաշուկայի հետ ամրապնդելու նպատակով կազմակերպվում են ավարտական կուրսի ուսանողների ամենամյա հանդիպումներ՝ ՀՀ տարբեր շրջանների խոշոր կլինիկաների գլխավոր բժիշկների և այդ շրջանների ղեկավարների

հետ: 2008-2011թթ. անցկացված գիտական հետազոտության շրջանակներում գործատուների և շրջանավարտների շրջանում անցկացված հարցումները թույլ են տվել պարզելու կրթական ծրագրերի և ուսումնական գործընթացի այն խնդիրները, որոնք խոչընդոտում են ուսանողների ազատ մուտքն աշխատաշուկա: Հետազոտության արդյունքների հիման վրա մշակվել են համապատասխան առաջարկներ: Համաձայն համալսարանի որդեգրած քաղաքականության՝ լավագույն շրջանավարտներին առաջարկվում են աշխատատեղեր համալսարանական ամբիոններում և կլինիկաներում: Համալսարանը մասնակցում է փոխանակման և միջազգային ծրագրերի, ինչպիսիք են «Tempus»-ը և «Erasmus mundus»-ը, որոնցում առկա են կարիերային նպաստող բաղադրիչներ:

4.6 Ամբիոնների գերակշիռ մասի կողմից իրականացվող գիտահետազոտական աշխատանքներում ընդգրկված ուսանողների թիվը քիչ է: Այդ ուսանողները դառնում են տեղական և միջազգային հանդեսներում տպագրված հոդվածների համահեղինակներ: Ավելի մեծ թվով ուսանողներ մասնակցում են գիտահետազոտական խմբակների աշխատանքներին և կատարում են հիմնականում ռեֆերատիվ բնույթի աշխատանքներ: Ուսանողների կողմից կատարվող գիտական աշխատանքները համակարգում է Ուսանողական գիտական ընկերությունը: Հետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավվածությունը մեծապես կախված է իրենց մոտիվացիայից և կարողություններից:

4.7 ՄՈՒՀ-ի Ուսանողական խորհրդարանը ստանձնել է պարտավորություն ապահովել ուսանողական ինքնավարության և ուսանողական ինքնակառավարման գործընթացները համալսարանի ողջ ուսանողության շրջանում, պաշտպանել ուսանողության շահերն ու իրավունքները, նպաստել նրանց հասարակական, գիտական, մտավոր, ստեղծագործական, մշակութային, բարոյական և հոգևոր զարգացմանը:

Խորհրդարանը ձևավորվում է ներկայացուցչական ընտրությունների սկզբունքով: Մինչև 125 ուսանողներից բաղկացած յուրաքանչյուր կուրս խորհրդարանում ունի 1 անդամ, իսկ 125-ից ավելի թվով ուսանողներ ունեցող կուրսը՝ 2: Այն թեկնածուն, ով ստացել է առավելագույնս շատ ուսանողների ձայն, ընտրվում է անդամ: Ուսանողական խորհրդարանը կազմված է ուսումնամեթոդական, լրատվության և տեղեկատվության, մշակութային գործերի, ուսանողական գիտական ընկերության, ֆակուլտետային (ընդհանուր բժշկության, ստոմատոլոգիական, օտարերկյա ուսանողների ուսումնական աշխատանքների գծով) ինտերնատուրայի և կլինօրդինատուրայի հանձնաժողովներից:

Անհրաժեշտության դեպքում համալսարանի իրավաբանական բաժինը, դեկանատները և այլ ստորաբաժանումները մասնակցություն են ունենում ուսանողների իրավունքների պաշտպանության հարցերում:

2010թ-ից ուսումնամեթոդական հանձնաժողովի անդամներն ուսանողի շահերը պաշտպանելու հարցերում մասնակցում են գնահատման բողոքարկման գործընթացին:

4.8 ՄՈՒՀ-ը նախատեսում է ապահովել ուսանողներին մատուցվող ծառայությունների որակի ապահովմանն ուղղված գործընթացները Որակի ապահովման և գնահատման կենտրոնի միջոցով: Մինչև 2006թ. համալսարանում չեն գործել ուսանողներին մատուցվող ծառայությունների որակի ապահովման, ՄՈՒՀ-ի ընթացիկ գործընթացների և առկա ստորաբաժանումների աշխատանքի գնահատմանն ուղղված կառույցներ և կանոնակարգեր:

2006թ. ստեղծված Բարեփոխումների և ինտեգրացիայի բաժնի գործառույթներում առկա էին նաև ուսանողներին մատուցվող ծառայությունների որակի ապահովմանն ուղղված գործընթացներ: Վերջին մեկ տարվա ընթացքում շուրջ 1800 ուսանողների շրջանում անցկացվել են հարցումներ կրթության որակի ներքին ապահովման համակարգի և ուսանողներին մատուցվող ծառայությունների որակի գնահատման վերաբերյալ: Այդ հարցումների արդյունքում մշակվել է գործողությունների պլան, որը հաստատվել է Գիտական խորհրդի 2013թ-ի ապրիլ ամսվա նիստում:

ԴԱՏԱՂՈՒԹՅՈՒՆ

Ուսանողների ակտիվ մասնակցությունը դասավանդվող ծրագրերի գնահատման և բարելավման գործընթացում համալսարանի ուժեղ կողմն է: Ուսանողներն իրազեկ են և ներգրավված համալսարանի գործունեության կազմակերպման գործընթացում: Ուսանողների ընդունելությունը կանոնակարգվում է կառավարության կողմից: Օտարերկյա ուսանողների ընտրության հարցում համալսարանի դերակատարությունը ակնհայտորեն ավելի մեծ է, քան տեղացի ուսանողների ընտրության գործընթացում: Ուսանողների ընդունելության միասնական գործընթացի վերաբերյալ պետական կանոնակարգի առավելությունների ու թերությունների ուղղությամբ վերլուծություն դեռևս չի կատարվել:

ԵՊԲՀ-ը մշակում է ծրագրեր կարիերայի պլանավորման համար ուսանողական կենտրոնի ուղղությամբ, ինչը կամրապնդի կապը աշխատաշուկայի հետ:

Վերջերս կիրառվել են ուսումնական, խորհրդատվական և կրթական այլ ծառայությունների որակի ապահովման և գնահատման մեխանիզմներ, սակայն դեռ շատ վաղ է գնահատել այդ գործիքների կիրառումը և ուսանողներին տրամադրվող ծառայությունների արդյունավետությունը: Գնահատման այս գործընթացները ներկայումս մշակման փուլում են:

Եզրահանգում: Փորձագիտական խումբը եզրակացնում է, որ ուսանողներին հաջողվում է իրենց ձայնը լսելի դարձնել համալսարանի ղեկավարման օղակներում: Նրանց մասնակցությունը ստորաբաժանումներում և հանձնաժողովներում վերջին մի քանի տարիների ընթացքում լավ է կազմակերպված: Ուսանողների գնահատումը բավականին ավանդական է և որպես այդպիսին՝ համահունչ ուսումնական պլաններին: Հայ ուսանողների համար ընդունելության չափանիշները սահմանված են օրենսդրությամբ, որոնք չեն չափում ընդունված ուսանողների մոտիվացիան և կարողությունները: Սա հակադիր է օտարերկյա ուսանողների ընտրության գործընթացին: Ներկայումս ԵՊԲՀ-ն աշխատում է կարիերայի կենտրոնի ստեղծման ուղղությամբ՝ աշխատաշուկայի հետ կապը բարելավելու նպատակով:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ԵՊԲՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉՍՓԱՆԻՇ 4-ի պահանջներին բավարար է:

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Անհրաժեշտ է՝

- հիմնել կարիերայի կենտրոն, որը կամրապնդի աշխատաշուկայի և ծրագրերի միջև կապը, ինչպես նաև կօգնի ուսանողներին կողմնորոշվել բուհն ավարտվելուց հետո,

- մշակել որակի ապահովման մեխանիզմներ ու գործիքներ՝, ուսանողներին տրամադրվող խորհրդատվության և աջակցության ծառայությունների արդյունավետությունը գնահատելու և բարելավելու համար,
- ավելի շատ կենտրոնանալ հետազոտության և բոլոր ծրագրերում հետազոտական աշխատանքների վրա (ավելի մանրամասն տես չափանիշ 6),
- զգալի ջանքեր ներդնել ուսանողների միջազգայնացման ուղղությամբ:

ՉԱՓԱՆԻՇ V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՌԻՍՈԻՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնասօժանդակ կազմով:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

5.1 Մասնագիտական բարձր որակներով պրոֆեսորադասախոսական կազմ ընտրելու և խթանելու համար համալսարանը (1) համալրել է պրոֆեսորադասախոսական կազմը երիտասարդ դասախոսներով, (2) սահմանել է մասնագիտական որակավորման հստակ պահանջները, (3) ունի հստակ մեխանիզմներ և ընթացակարգեր նրանց ընտրության և գնահատման համար, (4) բարելավել է պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական զարգացման պլանը՝ ապահովելով նրանց անհրաժեշտ ներգրավվածությունը: Սկսած 2011 թվականից պրոֆեսորադասախոսական կազմի ընտրությունն իրականացվել է մրցութային կարգով՝ ըստ սահմանված ընթացակարգի: Այժմ պրոֆեսորադասախոսական կազմի տարբեր տարակարգերի /պրոֆեսոր, դոցենտ, օգնական/ համար պահանջվող անհրաժեշտ շեմը նրանց ընդհանուր և մասնագիտական գործունեության բնագավառների (ուսումնամեթոդական, գիտական, կլինիկական և այլն) համար գտնվում է մշակման փուլում: Այն թույլ կտա համալսարանին մշտադիտարկման միջոցով գնահատելու գործող՝ դասախոսների հավաքագրմանն ու գնահատմանն առնչվող ընթացակարգերը և քաղաքականությունը:

5.2 Առկա են յուրաքանչյուր կրթական ծրագրի համար պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակավորմանը ներկայացվող հստակ սահմանված պահանջներ, սակայն դրանք սահմանված չեն առանձին կրթական ծրագրերի համար: Ներկայումս պրոֆեսորադասախոսական կազմի հավաքագրման ընթացակարգով հստակ սահմանված են դասախոսների տարակարգերի (պրոֆեսոր, դոցենտ, ասիստենտ, դասախոս) գործառույթները և աշխատանքային բնութագրերը: Նույն կարգով սահմանվում են նաև պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքային բնութագրերը, այսինքն՝ թե դասախոսը որ կրթական մակարդակներում և ինչ ուսումնական պլանով կարող է դասավանդել:

5.3 ՄՈՒՀ-ը փորձում է պարբերաբար գնահատել պրոֆեսորադասախոսական կազմին մշակված քաղաքականության և ընթացակարգերի միջոցով: Դասախոսների գնահատումը պարբերաբար իրականացվում է 1-5 տարիների ընթացքում՝ կախված նրա հետ կնքված պայմանագրում աշխատանքային գործունեության համար սահմանված ժամկետից:

Մինչև 2010թ. համալսարանում պրոֆեսորադասախոսական կազմի գնահատումը կազմակերպվել է յուրաքանչյուր կիսամյակում «Դասախոսը ուսանողի աչքերով» հարցումների միջոցով: Հարցումների արդյունքները հաշվի են առնվել դասախոսների հետ պայմանագրերը վերակնքելու ժամանակ: Դասախոսական կազմի որակի պարբերական գնահատում իրականացվել է ամբիոնների դասախոսների կողմից փոխադարձ դասալսումների միջոցով: Անցկացված դասալսումների արդյունքները քննարկվել են ամբիոնական նիստերում:

Սկսած 2011թ-ից, երբ համալսարանում վերականգնվեց դասախոսների մրցույթով ընտրության կարգը, ընտրության հիմքում դրվեց դասախոսի որակավորման գնահատման քաղաքականությունը: Համաձայն այդ քաղաքականության և մշակված համակարգի՝ 5 տարվա կտրվածքով գնահատվում են դասախոսի գործունեության բոլոր բնագավառները (ուսումնամեթոդաբանական, գիտական, հետբուհական և շարունակական կրթության, կլինիկական, վարչական և հասարակական): Ուսանողների կողմից դասախոսին տրված գնահատականը նույնպես հաշվի է առնվում:

5.4 Մինչև 2007թ. համալսարանում գործում էր Դասախոսի որակավորման բարձրացման բաժինը, որի կողմից կազմակերպվում էին դասախոսների մասնագիտական զարգացման և վերապատրաստման դասընթացներ: Այդ դասընթացներին դասախոսները մասնակցում էին 5 տարին 1 անգամ:

2007թ. դասախոսների շրջանում անցկացված հարցումների արդյունքում վերապատրաստման այս ձևը հանվեց: 2008թ. դասախոսների շրջանում անցկացվեց մեկ այլ հարցում, որի միջոցով հնարավոր եղավ պարզել, թե ինչպիսի որակավորումների կարիք ունեին դասախոսները: Հարցմանը մասնակցած դասախոսների գերակշիռ մասը կարևորել էր պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման դասընթացների, մասնագիտական ավելի շատ հմտությունների զարգացման, նոր գիտելիքների ձեռքբերման և դասավանդման նոր մեթոդների տիրապետման անհրաժեշտությունը:

2012թ. բացվեց դասախոսների վերապատրաստման նոր բաժին: Այն ստանձնել է նախաձեռնություն և պատասխանատվություն պրոֆեսորադասախոսական կազմի մանկավարժական, հոգեբանական, ինչպես նաև մասնագիտական զարգացման, վերապատրաստման և որակավորման հարցերի համար:

5.6 Հաշվետու ժամանակահատվածում համալսարանում, համաձայն ռազմավարական ծրագրի նպատակների, կատարվել է պրոֆեսորադասախոսական կազմի համալրում: Այսպես, վերջին 5 տարում նպատակային հետբուհական կրթության ընդունվողների թիվը եղել է 34, որից 22-ը համալսարանում շարունակել են իրենց դասախոսական գործունեությունը: Տարվա մեջ մի քանի անգամ համալսարանի աշխատակիցներն արժանանում են նյութական խրախուսման, ստանում են ֆինանսական օգնություն և այլն, սակայն համալսարանում դեռևս հստակեցված չէ պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի գնահատման գործընթացը, ինչը հետագա ուշադրության կարիք ունի: Դեռևս գնահատված չէ նաև աշխատողների բավարարվածության մակարդակը:

5.7 Ներկայումս համալսարանի տարբեր ստորբաժանումներում աշխատակիցների թիվը կազմում է 508, որոնցից 246-ը վարչական աշխատողներ են, իսկ 262-ը՝ ուսումնասովորակ

կազմ, ինչը բավարարում է ՀՀ բուհերի լիցենզավորման պահանջներին: Այս ժամանակահատվածի համար անհրաժեշտություն է առաջացել որոշ փոփոխություններ կատարել ստորաբաժանումների տեսակների և աշխատատեղերի տարակարգերի մասին կանոնակարգում՝ հաշվի առնելով ամբիոնների առանձնահատկությունները և ներկայումս համալսարանում անցկացվող հետազոտության արդյունքները, ինչը հիմք է ծառայում ուսումնասովանադակ անձնակազմի տարաբաշխման համար:

ԴՄՏՈՂՈՒԹՅՈՒՆ

ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնասովանադակ կազմի ընտրության քաղաքականություն և մի շարք ընթացակարգեր: Յուրաքանչյուր կրթական ծրագրի համար պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակավորմանը ներկայացվող պահանջներն առանձին կրթական ծրագրերի համար հասանելի են: ԵՊԲՀ-ն ունի հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար: Միևնույն ժամանակ ՄՈՒՀ-ը ձգտում է որակի ներքին ապահովման արդյունքներն ավելի արդյունավետորեն կիրառել պրոֆեսորադասախոսական կազմի կատարելագործման համար: Ներկայումս ոչ բոլոր վերլուծություններն են առկա: Միջազգայնացմանը և մասնագիտական զարգացմանը նույնպես պետք է ավելի ուշադրության դարձնել: Ակնհայտ է, որ պրոֆեսորադասախոսական կազմի ներգրավվածությունը հետազոտական աշխատանքներում թույլ կողմ է. այս խնդիրն առավել մանրամասն կքննարկվի չափանիշ 6-ի գնահատման ընթացքում:

Եզրահանգում: Փորձագիտական խումբը հանդիպել է շատ մոտիվացված և նվիրված պրոֆեսորադասախոսական կազմի հետ: Խուբը գտնում է, որ դասախոսները միմյանց հետ սերտ համագործակցում են և անցկացնում են գործընկերային քննարկումներ: Մա կարևոր է, քանի որ աշխատակազմի որակը որոշում է կրթության որակը: Այնուամենայնիվ, այլ համալսարաններից ավելի շատ դասախոսներ պետք է հրավիրվեն աշխատանքի: Անհրաժեշտ է իրականացնել պրոֆեսորադասախոսական կազմի հետագա մասնագիտացմանն ուղղված գործընթացներ:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ԵՊԲՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 5-ի պահանջներին բավարար է:

ԽՈՐՀՐԴՄՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Անհրաժեշտ է՝

- ապահովել պրոֆեսորադասախոսական կազմի ակտիվ մասնակցությունը հետազոտական աշխատանքներում,
- մշակել հստակ սահմանված քաղաքականություն և ընթացակարգեր պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական զարգացման համար, վերհանել հատուկ կարիքները հետագա բարելավման համար,

- կազմակերպել մասնագիտական վերապատրաստումներ երիտասարդ դասախոսների համար,
- ներգրավել դասախոսներ արտասահմանից,
- պրոֆեսորադասախոսական կազմին հնարավորություն տալ իրականացնելու վերապատրաստումներ ԵՊԲՀ-ից դուրս:

ՉԱՓԱՆԻՇ VI. ՀԵՏԱԳՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ

ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.

6.1 Համալսարանի գիտակոորդինացիոն կենտրոնը պատասխանատու է գիտահետազոտական աշխատանքների համակարգման համար: Կենտրոնի կանոնակարգով սահմանված գործառնությունները հետևյալն են՝

- ամբիոնների գիտական ուղղությունների հաստատում և աջակցություն իրականացման ընթացքում,
- գիտական ծրագրերի մրցութային կարգով բազային և թեմատիկ ֆինանսավորում ՀՀ պետական բյուջեից,
- գիտական կադրերի պլանավորում և համապատասխան մասնագիտական պատրաստում,
- գիտահրատարակչական գործունեության գիտական անձնագրի պատրաստում:

Համալսարանիկչական գործունեության գիտական անձնագրի պատրաստումհետազոտականկչական գործունեության գիտաորակիտականկչական գործունեության, ակիտականկչական գործունեության գիտական անձնագրի պատրաստում:ստում, ՀՀ պետական բյուջեից,րգման համա

6.2 2006-2011թթ. համալսարանում մշակվել են 5 հիմնական գիտական ուղղությունների երկարաժամկետ ծրագրեր, որոնց ընտրությունը կատարվել է հետևյալ սկզբունքով. ոլորտի առաջատար մասնագետը ներկայացրել է համապատասխան գիտական նախագիծ, որը քննարկվել ու գրախոսվել է մասնագիտական փորձագիտական հանձնաժողովներում և վերջնական հաստատման ներկայացվել գիտակոորդինացիոն խորհրդին: Քանի որ նույն գերակա ուղղությամբ աշխատում են մի քանի ամբիոններ, լաբորատորիաներ և կլինիկաներ, ապա յուրաքանչյուրի համար սահմանվել են գիտական ուղղությունների միջնաժամկետ ծրագրեր երեք տարի տևողությամբ, որոնց մի մասն ուղղված է երկարաժամկետ ծրագրերի իրականացմանը: Միջնաժամկետ ծրագրերը հիմք են հանդիսանում տարեկան կարճաժամկետ պլանավորման համար, և դրանք անհատական գիտական թեմաներ են, որոնք իրականացվում են հետազոտողի դոկտորական և հետբուհական մակարդակներում: Այդ թեմաները գիտահետազոտական աշխատանքներին զուգահեռ մարդկային ռեսուրսների տեսակետից ապահովում են կադրային փոփոխությունն ու արդիականացումը: Գիտական գերակա ուղղությունների համար տրամադրվող ֆինանսական ռեսուրսների օգտագործումն

ու բաշխումը միշտ չէ, որ հստակ է: Որոշ հետազոտական աշխատանքներ հնարավոր չեն լինում իրականացնել ռեսուրսների սղության պատճառով:

6.3 ԵՊԲՀ-ի գիտահետազոտական աշխատանքներն իրականացվում են համապատասխան ՀՀ կանոնակարգերի և համալսարանի կողմից հաստատված ընթացակարգերի : ԵՊԲՀ-ն ունի հետազոտական աշխատանքների կազմակերպման պատասխանատու 3 օղակ՝ գիտակոորդինացիոն խորհրուրդը, գիտակազմակերպչական միավորը և գիտահետազոտական կենտրոնը, որոնք գործում են սահմանված քաղաքականության համաձայն, սակայն դրանց գործունեության որակը և արդյունավետությունը չի գնահատվել: Լավագույն փորձի փոխանակումը դեռևս ինստիտուցիոնալ բնույթ չի կրում:

6.4 Համալսարանի ռազմավարությունում շեշտադրված է հետազոտական աշխատանքների միջազգայնացման խնդիրը: Միևնույն ժամանակ բժշկագիտության որոշ ոլորտներ բացակայում են կրթական ծրագրերում, ինչը խոչընդոտում է միջազգային համագործակցությանը և հետազոտության միջազգայնացմանը:

Համալսարանը գտնում է, որ իր պաշտոնական կայքէջը որոշակի դեր ունի իր գիտական գործունեության միջազգայնացման հարցում: Կայքէջի միջոցով համալսարանը օտարերկրյա ուսանողներին տեղեկացնում է միջազգային միջոցառումների մասին և խրախուսում նրանց մասնակցությունը: Այն հնարավորություն է տալիս ներկայացնել բժշկագիտության բնագավառում կատարված հետազոտություններ, ինչպես նաև համեմատել դրանք միջազգային տվյալների հետ և արդիական գիտելիքներով թարմացնել ուսումնական, գործնական և գիտական գործընթացները:

Համալսարանի երիտասարդ հետազոտողները՝ ասպիրանտներն ու դոկտորանտները, ովքեր արտերկրում գիտահետազոտական աշխատանք կատարելու հնարավորություն են ունենում անհատական հրավերների, կրթաթոշակային ծրագրերի կամ հետազոտական դրամաշնորհների միջոցով, պարտավորվում են ծրագրի ավարտին վերադառնալ հայրենիք և առնվազն 3 տարի աշխատել համալսարանում:

Պրոֆեսորադասախոսական կազմի և հետազոտողների՝ արտերկրյա նշանավոր գիտական ամսագրերում հրատարակված աշխատությունները բարձր են գնահատվում: Որոշ դեպքերում հաստատությունը գիտական մեծ արժողություն ունեցող հրատարակված հետազոտական աշխատությունների համար ֆինանսական աջակցություն է տրամադրում:

6.5 Ըստ համալսարանի ռազմավարության՝ ԵՊԲՀ-ը փորձում է հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի միջև կապն ամրապնդել, սակայն ոչ բոլոր ուսանողներն են ներգրավված հետազոտական աշխատանքներում: Ավելին, ուսանողների հետազոտական աշխատանքների մեծամասնությունը սահմանափակվում է ռեֆերատային բնույթ կրող աշխատանքներով, որը թույլ չի տալիս նրանց ձեռքբերել գիտական, գործնական հմտություններ ու գիտելիք:

Կան ուսանողական գիտահետազոտական խմբեր, որոնք ապահովում են որոշ ուսանողների ներգրավվածությունը հետազոտական աշխատանքներում: Խմբի անդամներն ակտիվորեն մասնակցում են դրամաշնորհային հետազոտական ծրագրերում և ամբիոնների ու գիտական լաբորատորիաների գիտական գործունեության մեջ՝ երբեմն դառնալով գիտական աշխատությունների համահեղինակներ:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Զգալի բացողումներ են առկա ԵՊԲՀ-ի հետազոտական նպատակների ուղղությամբ գիտական ռազմավարության ձևավորման և կարճաժամկետ ու երկարաժամկետ պլանավորման տեսանկյունից: ԵՊԲՀ-ը ներկայացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորումը իր գիտական ուղղություններում: Այնուամենայնիվ, փաստաթղթերը հստակ չեն և ավելի շատ ուղղորդող են, որոնք փորձում են ամրապնդել առկա բժշկական հետազոտությունը: Համալսարանում հետազոտության հիմնական դերը չի պահպանվում համապատասխան ռեսուրսների օգնությամբ, քանի որ բյուջեի 5%-ից քիչ է տրամադրվում հետազոտության բաղադրիչին:

Առկա ֆինանսական ռեսուրսները չեն նպաստում բժշկագիտության հետազոտական նոր ոլորտների զարգացմանն ու ներդրմանը: Համալսարանի միջազգային համագործակցությունը բավականին թույլ է և չի խթանում հետազոտական աշխատանքների միջազգայնացումը: ԵՊԲՀ-ն իր հետազոտական աշխատանքների միջազգայնացման տեսակետից հիմնական ուշադրությունը դարձնում է տեղեկատվության տրամադրմանը, բայց ակտիվ համագործակցությունը դեռևս շեշտադրված չէ: Հետազոտությունը կամ գիտական մտածողությունը կրթական ծրագրի մեթոդաբանության մեջ ներմուծելու ուղղությամբ քաղաքականությունն ու ընթացակարգերը համապատասխան ձևով մշակված չեն: Չնայած ԵՊԲՀ-ի կրթական ծրագրերում կարևորվում և ներկայացվում է հետազոտական բաղադրիչը, սակայն, դեռևս բավարար չէ բացատրել և ձևակերպել հետազոտության արդյունքն առարկաներում: Բավարար չէ նաև կլինիկական բժշկության մեջ ախտորոշման կամ բուժման նպատակով նորագույն բժշկական տեխնոլոգիաներով նոր մեթոդների կիրառումը՝ ուսանողների գործնական հմտությունները զարգացնելու համար: Կրթական ծրագրերում գիտական մտածողություն և հետազոտական մոտեցում ցուցաբերելու այս եղանակի արդյունավետությունը գնահատված չէ: Հետազոտությունն ու կրթական գործընթացը կապակցվող մեխանիզմներն ու գործիքները բավարար արդյունավետություն չեն ցուցաբերում:

Եզրահանգում: Փորձագիտական խումբը եզրակացնում է, որ հետազոտության ուղղությամբ ռազմավարությունը պատշաճ չի իրականացվում հետազոտական համալսարան դառնալու համար: Հետազոտական աշխատանքները զգալիորեն սահմանափակ են արդյունքների և հետազոտության մեջ պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների ներգրավվածության մակարդակի տեսանկյունից: Հետազոտությունը կառուցվածքային առումով ներառված չէ ուսումնական պլանում: Հետևապես, փորձագիտական խումբը այս չափանիշը գնահատում է բացասական:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԵՊԲՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉՍՓԱՆԻՇ 6-ի պահանջներին բավարար չէ:

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Անհրաժեշտ է՝

- լրամշակել համալսարանի՝ հետազոտության ուղղությամբ հետաքրքրություններն ու հավակնություններն արտացոլող քաղաքականությունը: Դասախոսները և ուսանողները պետք է ակտիվորեն ներգրավված լինեն հետազոտական աշխատանքներում, իսկ հետազոտական ծրագրերի ղեկավարները պետք է հաշվի առնեն միջազգային չափորոշիչները,
- կենտրոնանալ հետազոտության որոշակի ոլորտների վրա՝ համալսարանի ռազմավարությանը համապատասխան,
- հետազոտությանը ավելի կենտրոնական դեր և կառուցվածք տալ հաստատությունում և կրթական ծրագրերում,
- ապահովել պրոֆեսորադասախոսական կազմի ավելի ակտիվ խրախուսումը գիտական գործունեության միջազգայնացման տեսակետից և գնահատել այդ գործունեության արդյունավետությունը,
- հստակեցնել հետազոտությունն ու ուսումնական գործընթացը կապող մեխանիզմները՝ գնահատելով դրանց արդյունավետությունը,
- նպաստել միջազգային համագործակցությանը և ակտիվորեն գիտական կապեր հաստատել արտերկրյա առաջատար բժշկական կենտրոնների և համալսարանների հետ,
- վերանայել հետազոտության համար բյուջեի բաշխումը և ռազմավարությունները՝ հետազոտական ծրագրերի համար արտաքին ֆինանսական ռեսուրսներ ձեռքբերելու համար:

ՉԱՓԱՆԻՇ VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Մուին ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.

7.1 Ռազմավարական ծրագրում կարևորվում են համալսարանի լսարանային ֆոնդը, շենքային պայմանները, նյութատեխնիկական բազան, կլինիկաների, գրադարանի և ուսումնական միջավայրի այլ բաղադրիչների վերակառուցման ու վերազինման խնդիրները:

Այսօր համալսարանը զբաղեցնում է 88226 քմ տարածք: Հիմնական մասնաշենքը բաղկացած է չորս առանձին կառույցներից, որտեղ հիմնականում տեղակայված են տեսական ամբիոնները: Կլինիկական մասնագիտական ամբիոնները գտնվում են 29 և համալսարանական 3 կլինիկաներում: Տեսական առարկաների դասախոսություններն անցկացվում են համալսարանի հիմնական մասնաշենքի 12 լսարաններում, որոնք կարող են միաժամանակ տեղավորել 1125 ուսանող: Կլինիկական առարկաների դասախոսություններն անցկացվում են կլինիկաներում: Համալսարանն ունի նաև լաբորատորիաներ, գրադարան, ընթերցասրահ, մարզադահլիճներ, լողավազան, բուժկետ, հասարակական սննդի կետեր, հանրակացարան և տեսաձայնագրման հարմարություններով գիտաժողովների դահլիճներ:

Պրոֆեսորադասախոսական կազմի շրջանում կատարված հարցումները ցույց են տվել, որ ուսումնական միջավայրը, լսարանները և լաբորատորիաները բավարար են ուսումնական գործընթացը կազմակերպելու համար:

7.2 Կրթական ուղղակի ծախսերը (դասախոսների և աշխատակազմի աշխատավարձ, մասնագիտական գրականություն, նյութատեխնիկայի ձեռքբերման, լսարանների կահավորման, վերանորոգման և ուսումնակրթական այլ նպատակների համար անհրաժեշտ ծախսեր) կազմում են ընդհանուր ծախսերի 88%-ը (վերջին 3 տարիներին):

2007-2008թթ. դասախոսների աշխատավարձը բարձրացել է 15-20%-ով, իսկ 2012 թվականին՝ ևս 25-30%-ով: Պրոֆեսորադասախոսական կազմի աշխատավարձերի բաշխումը կատարվում է ըստ դասախոսների տարակարգերի, ամբիոնների հաստիքակազմի, ուսումնական ծանրաբեռնվածության և վարձատրության մասին կանոնակարգի: Մինչ այժմ տարբեր ստորաբաժանումների կարիքների գնահատումը չի իրականացվել ֆինանսական բաշխվածության հիման վրա:

7.3 Պետական բյուջետային մուտքերում հիմնական մաս են կազմում ուսանողական նպաստները, կրթաթոշակները, բժիշկների և բուժքույրերի վերապատրաստումների արդյունքում գոյացած ֆինանսական միջոցները, թեմատիկ գիտական ֆինանսավորումը և բուժճառայության համար նախատեսված միջոցները: Արտաբյուջետային մուտքերը հիմնականում գոյանում են վճարովի ուսուցմամբ ուսանողների ուսման վարձավճարների հաշվին (արտաբյուջետային մուտքերի շուրջ 90%-ը): Տարբեր ազգային և միջազգային դրամաշնորհներից ստացվող ֆինանսական միջոցները միջինում կազմում են բյուջեի 1.6%-ը: Համալսարանի բոլոր ստորաբաժանումները ներկայացնում են անհրաժեշտ գույքի, տեխնիկական միջոցների, գիտական հետազոտությունների և ուսումնամեթոդական նյութերի վերաբերյալ դիմում-հայտ՝ նշելով դրանց համապատասխան տեխնիկական բնութագրերը: Այս կերպ համալսարանական ստորաբաժանումները մասնակցում են ուսումնական ռեսուրսների ձեռքբերման գործընթացին, որին մասնակցություն են ունենում նաև դասախոսները և ուսանողները:

7.4 ԵՊԲՀ-ում տարվել են աշխատանքներ համալսարանի ենթակառուցվածքի որակը բարելավելու և այն կրթական ծրագրերին համապատասխանեցնելու ուղղությամբ: Գրադարանն ընդգրկվել է համահայկական գրադարանային կոնսորցիումում, որի կազմում ունի գրականության էլեկտրոնային բազայի իր էջը: Այն հեշտացրել է գրքերի, դրանց բովանդակության և հեղինակներին որոնելու գործընթացը: Այնուամենայնիվ, համալսարանի ներդրումները գրականության ձեռքբերման և գրադարանային ծառայությունների ապահովման ուղղությամբ բարելավման կարիք ունեն:

2010-2011 ուսումնական տարվանից սկսած՝ համալսարանում գործում են ուսանողներին հասանելի տասը ինտերնետային մուտքի կետեր՝ WiFi ինտերնետային ծածկույթ ապահովելով համալսարանի տարածքի մեծ մասում: Ենթակառուցվածքի և ռեսուրսների արդյունավետությունը պարբերաբար չի գնահատվում, չնայած փորձագիտական խումբը փաստում է տարբեր ուղղություններով կատարվող զգալի բարելավումների մասին:

7.5 Համալսարանի տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կարգավորվում են ԵՊԲՀ-ի ներքին կարգապահական կանոնակարգերով, ՀՀ օրենսգրքով և այլ

իրավական ակտերով: Համալսարանում տեղեկատվության կառավարումն իրականացվում է ընդհանուր բաժնի կողմից: Արտաքին տեղեկատվությունը կարգավորում է հասարակայնության հետ կապերի բաժինը, որը հսկում է ինտերնետային կայքում, թերթերում, ամսագրերում և տեղեկագրերում տպագրվող տեղեկատվությունը: Համալսարանում գործում է տեղեկատվության հաղորդման երկու եղանակ՝ վերից վար (վարչական օղակներից դեպի ամբիոններ) և ներքևից վերև (ամբիոններից ռեկտոր): Վերից վար եղանակով տեղեկատվությունը հաղորդվում է հրամանների և որոշումների միջոցով ու ապահովում է կապը կառավարման խորհրդի, մեթոդական հանձնաժողովների, ուսումնամեթոդական վարչության, դեկանատների և ամբիոնների միջև: Ներքևից վերև եղանակով տեղեկատվությունը հիմնականում փոխանցվում է հաշվետվությունների տեսքով:

Դեռևս չկա տվյալների կառավարման համընդհանուր համակարգ ինստիտուցիոնալ մակարդակով՝ ուղղված տարբեր ստորաբաժանումների միջև կապի ապահովմանը: Ներկայումս համալսարանում ակտիվորեն աշխատանքներ են տարվում այս ուղղությամբ:

7.6 ԵՊԲՀ-ը տրամադրում է առողջապահական և անվտանգության ծառայություններ, սակայն հստակ չէ, թե այդ գործընթացները որքանով են արդյունավետ:

Համալսարանի անվտանգությունն ապահովվում է անցակետերի և շրջիկ ծառայության միջոցով՝ ըստ ԵՊԲՀ-ի ներքին կարգապահական կանոնակարգի: Հատուկ կարիքներ ունեցող ուսանողների շահերը միշտ չէ, որ պահպանվում են. համալսարանի ոչ բոլոր մասնաշենքերն ունեն վերելակներ, և մուտքերը կահավորված չեն շարժասայլակների համար նախատեսված հարթակներով:

7.7 Համալսարանն իր ֆինանսական սահմանափակ հնարավորությունների շրջանակում կարողացել է ստեղծել բավարար ուսումնական միջավայր՝ ներառյալ գրադարանը և SS ռեսուրսները: 2011թ. ստեղծված Կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոնի կողմից DIUS ծրագրի շրջանակներում մշակվել է կրթական ռեսուրսների և խորհրդատվական ծառայությունների արդյունավետության գնահատմանն ուղղված գործիքներ: Փաստացի գնահատում դեռևս չի իրականացվել:

ԴՍՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Կլինիկաներում որոշ սարքավորումներ ժամանակակից են, սակայն միաժամանակ որոշ բազային սարքավորումներ կամ բացակայում են, կամ հնացած են: Այլ կլինիկաների, համալսարանների և անգամ առևտրային ձեռնարկությունների հետ համագործակցությունը կարող է ապահովել տեխնոլոգիապես նոր և հետևապես թանկարժեք սարքերի և այլ նյութերի առկայությունը:

Համալսարանում դեռ նկատվում է առաքելության և նպատակների իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների և սարքավորումների ձեռքբերման համար ֆինանսական հնարավորությունների սղություն. գրադարանային ծառայությանը տրամադրվում է ողջ բյուջեի 0.2%-ը, տեղեկատվական համակարգերին՝ 0.1% և լաբորատորիաներին՝ 0.25%: Տարբեր ստորաբաժանումների կարիքների գնահատումը հիմք չի հանդիսանում պլանավորման քաղաքականության և ֆինանսական ռեսուրսների բաշխման համար, և այն հիմնականում իրականացվում է առանց դասախոսների և ուսանողների ակտիվ

մասնակցության: ԵՊԲՀ-ի ենթակառուցվածքի և ռեսուրսների արդյունավետությունը դեռևս պարբերաբար չի գնահատվել: Համապատասխան ընթացակարգերը դեռևս պետք է սահմանվեն:

Հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար միշտ չէ, որ առկա են համապատասխան հարմարություններ: Ակնհայտորեն շենքային ընդհանուր պայմանները խոչընդոտում են բարելավմանը՝ հաշվի առնելով խոշոր նորարարությունների համար տրամադրվող սահմանափակ բյուջեն:

Եզրահանգում: Փորձագիտական խումբը փաստում է, որ համալսարանը սահմանափակ ֆինանսական հնարավորություններով կարողացել է ստեղծել ուսումնական հարթակ՝ ներառյալ գրադարան և SS հարմարություններ: Ներկա իրավիճակի համար դրանք բավարար են՝ բացառությամբ հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար: Ռազմավարական պլանը և առաքելությունն իրականացնելու համար անհրաժեշտ է գտնել միջոցներ համալսարանի ֆինանսական ռեսուրսներն ավելացնելու և ներքին բաշխման մոդելը մշակելու համար:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ԵՊԲՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 7-ի պահանջներին բավարար է:

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Անհրաժեշտ է՝

- ընդլայնել ֆինանսական ռեսուրսները՝ անհրաժեշտ ռեսուրսներ և սարքավորումներ ձեռք բերելու համար,
- վերանայել SS սարքավորումների ողողությամբ ներդրումներ կատարելու հարցը,
- հիմք համարել ոտորաբաժանումների կարիքների գնահատումը՝ ֆինանսական ռեսուրսների բաշխման համար,
- մշակել ընթացակարգեր, գործիքներ և ժամանակացույց՝ գնահատելու կրթական ռեսուրսների արդյունավետությունը, կիրառելիությունն ու հասանելիությունը,
- մշակել SS ինտեգրացված համակարգ և հստակեցնել տեղեկատվության և փաստաթղթավորման գործընթացի կառավարման քաղաքականությունը,
- բարելավել հատուկ կարիքներ ունեցող ուսանողների հարմարությունները:

ՉԱՓԱՆԻՇ VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՍՈՒՀ-ն իր տրամադրված կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.

8.1 ԵՊԲՀ-ում մշակվել է հաշվետվողականության սահմանված կարգ, որի հիմքում ընկած է կառավարման միասնական տեղեկատվական բազայի ստեղծումն ըստ առանձին

բնագավառների տվյալների: Հաշվետվողականության գործիքներ են համարվում հետևյալ հիմնական աղբյուրները՝ համալսարանի կայքէջը, տարբեր ստորաբաժանումների հաշվետվությունները, ամսագրեր և լրագրեր կրթամեթոդական և գիտական աշխատանքների վերաբերյալ, որոնք հրատարակվում են համալսարանի կողմից, բանավեճային ակումբներ և հանրային արձագանքին ուղղված լրատվական նյութեր:

8.2 Համալսարանի կայքէջն ապահովում է համալսարանի տարբեր գործընթացների վերաբերյալ տեղեկատվության թափանցիկությունն ու հասանելիությունը: Տարեկան հաշվետվությունների հրատարակումը ԵՊԲՀ-ի ընթացակարգերի և գործընթացների թափանցիկության ապահովման մեխանիզմներից մեկն է:

8.3 Համալսարանը փորձում է ապահովել հանրության հետ կապերի մեխանիզմների կիրառումը էլեկտրոնային, բանավոր և գրավոր ձևերով: Համալսարանի կայքէջում կան «Հետադարձ կապ» և «Հարց ու պատասխան» պատուհաններ, որոնք մշտապես կիրառման մեջ են: Կան շաբաթվա մեջ նշանակված հատուկ օրեր ԵՊԲՀ-ի ռեկտորի և պրոռեկտորների հետ հանդիպումներ ունենալու համար: Արտաքին շահակիցների (գործատուներ և շրջանավարտներ) ֆորմալ հետադարձ կապի մեխանիզմները մշակման փուլում են:

8.4 Հանրությանը տեղեկացնելու ԵՊԲՀ-ի հիմնական գործիքները համալսարանի կայքէջն է (www.ysmu.am) և երկու տեղեկագրերը՝ «Ապագա բժիշկ» և «Մեդիկուս»: Համալսարանը պարբերաբար իրականացնում է մասնագիտական տեղեկատվական գործողություններ հասարակության տարբեր թիրախային խմբերի համար: Դրանցից մեկը «Առողջ ապրելակերպ» ծրագիրն է, որը մեկնարկել է ուսանողական խորհրդարանի նախաձեռնությամբ:

Պարբերաբար համալսարան են հրավիրվում բժշկության ոլորտի տարբեր փորձագետներ՝ մասնակցելու առողջապահությանը նվիրված հեռուստատեսային և ռադիո ծրագրերին, ովքեր հանրությանը տալիս են մասնագիտական տեղեկատվություն: Ներկայումս այս գործողությունները հիմնականում իրականացվում են անհատական կերպով ԵՊԲՀ-ի աշխատակազմի անդամների կողմից առանց քաղաքականության:

ԴՄՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Համալսարանում առկա են մի շարք գործիքներ (կայքէջ, տեղեկագրեր, ծրագրեր և այլն), որոնք ապահովում են ԵՊԲՀ-ի հաշվետվողականությունը կառավարությանը, գործատուներին և հասարակության լայն զանգվածին: Համալսարանը մշակել և կիրառում է հաշվետվողականության կանոնակարգը՝ հիմնվելով առանձին բնագավառների տվյալներով ԵՊԲՀ-ի տեղեկատվության կառավարման վրա: ԵՊԲՀ-ը գործատուների և շրջանավարտների հետ հետադարձ կապի մեխանիզմների մշակման փուլում է:

Եզրահանգում: Փորձագիտական խումբը եզրակացնում է, որ ԵՊԲՀ-ի հաշվետվողականության ներքին և արտաքին ապահովումն իրականացվում է մի շարք գործիքների կիրառման միջոցով: ԵՊԲՀ-ը հաստատում է, որ այս գործիքների գնահատումը ենթակա է հետագա ուշադրության: Պետք է նշել, որ համալսարանը շեշտում է արտաքին շահակիցների հետ հետադարձ կապի ֆորմալ մեխանիզմների կարևորությունը:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ԵՊԲՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 8-ի պահանջներին բավարար է:

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Անհրաժեշտ է՝

- մշակել ավելի բազմազան գործիքներ ԵՊԲՀ-ի գործընթացների և ընթացակարգերի հաշվետվողականությունն ապահովելու համար,
- մշակել հետադարձ կապի ապահովման ֆորմալ գործընթացներ, ինչպես նաև դրանց արդյունավետությունը գնահատելու մեխանիզմներ:

ՉԱՓԱՆԻՇ IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻԶԱԶԳԱՅՆԱՅՈՒՄԸ

Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

ԱՐՅՈՒՆՔՆԵՐ:

9.1 Համալսարանի արտաքին կապերի համընդհանուր ձևավորումը և գործընթացների միջազգայնացումը համարվում են ԵՊԲՀ-ի գերակա ուղղությունները: Համալսարանը հաստատել է կապեր մի շարք միջազգային բժշկական կազմակերպությունների/հաստատությունների հետ բժշկական կրթության և առողջապահության ոլորտներում: Սակայն, արտաքին կապերի խրախուսման գործընթացները բավարար չափով չեն իրականացվում փոխանակման ծրագրերին մասնակցելու և արտերկրից դասախոսներ հրավիրելու տեսանկյունից:

9.2 ԵՊԲՀ-ի միջազգային կապերի բաժինը համակարգում է արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացները: Բաժնի գործունեության տարեկան պլանավորումը ԵՊԲՀ-ի միջնաժամկետ պլանավորման բաղկացուցիչ մասերից է: Այն իրականացվում է ռեկտորի և միջազգայնացման աշխատանքների գծով պատասխանատու պրոռեկտորի կողմից: Դասախոսների և օտարերկրյա ուսանողների ներգրավումն այս պլանավորման գործընթացում դեռևս հստակ չէ:

9.3 ԵՊԲՀ-ը համագործակցում է քսան կլինիկաների հետ: Այն հաստատել է կապեր տարբեր երկրների բժշկական համալսարանների և առողջապահական ինստիտուտների, ինչպես նաև բժշկության և առողջապահության ոլորտում միջազգային կազմակերպությունների հետ: ԵՊԲՀ-ը ստորագրել և թարմացրել է մի շարք համագործակցության համաձայնագրեր՝ ԱՊՀ երկրների, Եվրոպայի, Կենտրոնական Ասիայի և ԱՄՆ բժշկական համալսարանների հետ, որոնք հիմնականում հուշագրային մակարդակում են: Համալսարանը ներգրավված է նաև տարբեր միջազգային ծրագրերում, ինչպիսին են DIUSAS, PICQA, Erasmus-Mundus և Համաշխարհային Բանկի ծրագրերը:

9.4 ԵՊԲՀ-ն ուսանողներին և դասախոսներին հնարավորություն է տալիս կատարելագործելու իրենց լեզվական հմտությունները: ԵՊԲՀ-ի ուսանողների առնվազն 30%-ը կրթական ծրագրերն անցնում է օտար լեզվով: Չնայած այս ուղղությամբ ներդրվող ջանքերին՝ օտար լեզվի իմացության ընդհանուր մակարդակը դեռ միջազգայնացման համար գլխավոր խոչընդոտ է:

ԴԱՏԱՂՈՒԹՅՈՒՆ

Արտաքին կապերի և միջազգայնացման ուղղությամբ հետագա ներդրումը համալսարանի գերակա ուղղություններից է: Մակայն, այժմ առկա չէ արտաքին կապերի խրախուսման հստակ քաղաքականություն: Արտաքին կապերի բաժինը համակարգում է համապատասխան գործընթացները և այլ ստորաբաժանումների հետ միասին կազմակերպում մի շարք միջազգային միջոցառումներ: ԵՊԲՀ-ը հաստատել է սերտ կապեր տարբեր երկրների բժշկական համալսարանների և առողջապահական ինստիտուտների հետ: Համալսարանը ջանքեր է գործադրել դասախոսների և ուսանողների օտար լեզվի հմտությունները կատարելագործելու ուղղությամբ, սակայն այդ ջանքերը միշտ չէ, որ բավարար են համապատասխան կարողությունների ձեռքբերման համար:

Միայն սահմանափակ թվով ուսանողներ են մասնակցում միջազգային միջոցառումներին: Օրինակ, բոլոր ուսանողները պետք է մեկնեն արտասահման առնվազն 3-ից 6 ամսով: Նույնը կարելի է դիտարկել աշխատակազմի համար: Անձնակազմից քչերն են ներգրավված միջազգայնացման գործընթացներում: Պրակտիկ գործունեություն իրականացնող դասախոսական կազմն առավելություն ունի դասավանդողների համեմատությամբ միջազգային բժշկական գիտաժողովների և դեղագործական կազմակերպությունների աջակցության շնորհիվ: Ընդհանուր առմամբ, անհրաժեշտ է ապահովել դասախոսների և ուսանողների ավելի շատ միջազգային շարժունություն:

Փորձագիտական խումբը միջազգային բենչմարքինգի փաստ չի արձանագրել: Որոշ ամբիոններ ներգրավված են բենչմարքինգի գործընթացում, բայց դա չի կատարվում ինստիտուցիոնալ մակարդակով: Փորձագիտական խումբն արդեն նկատել է, որ արտաքին շահակիցների ազդեցությունը սահմանափակ է:

Եզրահանգում: Չնայած համալսարանը քաջատեղյակ է միջազգային ասպարեզում ներգրավվելու կարևորության և անհրաժեշտության մասին, այնուամենայնիվ, փորձագիտական խումբը չնկատեց միջազգայնացման քաղաքականության ռեալ իրականացման բավարար հիմքեր:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ԵՊԲՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉՍՓԱՆԻՇ 9-ի պահանջներին բավարար չէ:

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Անհրաժեշտ է՝

- մշակել հստակ քաղաքականություն և կանոնակարգեր, որոնք կխթանեն միջազգային կապերը,

- ավելի շեշտադրել միջազգային բենչմարքինգի գործընթացը,
- տեղայնացնել և օգտագործել միջազգային լավագույն փորձերը հետազոտության և կրթության համար,
- մշակել չափորոշիչներ և մեխանիզմներ՝ միջազգայնացմանը և արտաքին կապերին ուղղված գործունեությունը գնահատելու համար,
- ընդլայնել օտար լեզվով դասավանդման հնարավորությունները:

ՉԱՓԱՆԻՇ X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.

10.1 2006թ. համալսարանում ստեղծվեց Ինստիտուցիոնալ բարեփոխումների և քաղաքականությունների բաժինը, որի աշխատանքները համակարգում և ղեկավարում էր համալսարանի պրոռեկտորը: Բաժինը պատասխանատու էր նաև կրթության որակին առնչվող խնդիրների համար, սակայն գործունեությունը համակարգված բնույթ չէր կրում: 2011թ. համալսարանում ստեղծվեց Որակի գնահատման և ապահովման բաժինը, որին հաջորդեց համալսարանի տարբեր ոլորտների գործունեության գնահատման վերաբերյալ ընթացակարգերի, կանոնակարգերի, ռազմավարության և որակի գնահատման ու ապահովման քաղաքականության մշակումը: Կրթության որակի գնահատման և ապահովման մեթոդական ձեռնարկը մշակման փուլում է:

10.2 Որակի գնահատման և ապահովման կենտրոնից բացի 2011թ. ստեղծվեցին որակի ապահովման համար պատասխանատու այլ ստորաբաժանումներ, մասնավորապես՝ համալսարանի կրթության որակի գնահատման և ապահովման մշտական հանձնաժողովը և համապատասխանաբար՝ ֆակուլտետային հանձնաժողովները: Այժմ կենտրոնում աշխատում են 5 հաստիքային մասնագետներ: Ֆակուլտետային հանձնաժողովներում ընդգրկված են 5, իսկ կենտրոնական մշտական հանձնաժողովում՝ 11 անդամ:

Համալսարանում կենտրոնի աշխատանքների կազմակերպման համար առանձնացվել են 2 վերանորոգված և կահավորված սենյակներ: Կենտրոնի գործունեության իրականացման համար առկա են բավարար շենքային, նյութատեխնիկական պայմաններ և մարդկային ռեսուրսներ: Կենտրոնին անհրաժեշտ ռեսուրսներով ապահովման արդյունքում մշակվել է որակի ապահովման կարճաժամկետ ռազմավարական պլան:

10.3 2006-2011թթ. ժամանակահատվածում արտաքին շահակիցները ներգրավված չեն եղել որակի ապահովման գործընթացներում, իսկ ներքին շահակիցների ներգրավվածությունը չի համակարգվել: Այդ տարիների ընթացքում կազմակերպվել են ՀՀ մարզերի գործատուների և շրջանավարտների մասնակցությամբ տարեկան հանդիպումներ, որի ընթացքում քննարկվել են աշխատաշուկայի պահանջները, ԵՊԲՀ-ի շրջանավարտներից գործատուների բավարարվածությունը և այլ հարցեր: Եվ՝ ներքին (դասախոսներ, ուսանողներ), և՛ արտաքին

(կլինիկական օրդինատորներ, բժիշկներ, բաժանմունքի վարիչներ և այլն) շահակիցները մասնակցում են կրթության որակի գծով հանձնաժողովների կողմից կազմակերպված հարցումներին:

Որակի ապահովման կենտրոնի քաղաքականությունն ընդգծում է շահակիցների ներգրավվածության կարևորությունը որակի ապահովման գործընթացներում: Համաձայն քաղաքականության՝ անհրաժեշտ է ապահովել ուսանողների, շրջանավարտների և գործատուների ներգրավվածությունը կառավարման տարբեր օղակներում և գնահատել բավարարվածության աստիճանը: 2011թ. սկսած՝ ոլորտի մասնագետներ և ուսանողներ են ներգրավվել որակի գնահատման ու ապահովման ֆալուլտետային հանձնաժողովներում և համալսարանի մշտական հանձնաժողովի կազմում:

10.4 Համալսարանի բարեփոխումների և ինտեգրացիայի բաժնի աշխատանքի արդյունավետության վերլուծությունը կատարվել է միայն մեկ անգամ՝ 2010թ-ի վերջին, և 2011թ. ստեղծված որակի ապահովման կենտրոնի կողմից աշխատանքի արդյունավետության գնահատումն իրականացվել է կենտրոնի ստեղծումից հետո: 2011թ. մշակվեցին որակի ապահովման կենտրոնի կանոնադրությունը, աշխատանքային պլանները, բաշխվեցին պատասխանատուների պարտականությունները և գործառույթները, և կազմվեց կենտրոնի ներքին օրգանոգրամման:

Հարցումները, որոնք մշակվել են գնահատման համակարգը գնահատելու համար, համապատասխան միջոցներ են: Ներկայացվել են մի շարք առաջարկություններ գնահատման համակարգում հնարավոր փոփոխություններ կատարելու վերաբերյալ: Բացի դա, իրականացվել են նաև այլ հարցումներ գործատուների, դասախոսների և կլինիկական օրդինատորների շրջանում՝ առկա կրթական համակարգի, ուսումնական պլանների, դրա առանձին բաղադրիչների, գնահատման համակարգի, ինչպես նաև դասախոսների մասնագիտական որակավորման կատարելագործմանն առնչվող ընթացակարգերի արդյունավետությունը գնահատելու համար:

Մշակվել են ուսանողների գիտելիքի գնահատման, պրոֆեսորադասախոսական կազմի որակի ապահովման, տեղեկատվության թափանցիկության, կրթական ռեսուրսների, օժանդակ ծառայությունների և տեղեկատվական համակարգերի արդյունավետության ամրապնդման մի շարք գործիքներ և ընթացակարգեր: Մշակվել է ներկայումս գործող նույնականացման քարտային համակարգը, որը համալսարանին թույլ կտա ուսումնասիրել օժանդակող ծառայությունների արդյունավետությունն ու հասանելիությունը:

10.5 Մինչև 2010թ. առկա չէին բավարար հիմքեր արտաքին գնահատում իրականացնելու համար: Այդուհանդերձ, համալսարանում առաջին անգամ իրականացվող ինքնավերլուծությունը կտա այդ հնարավորությունը: Ինքնավերլուծության զեկույցը կազմելու նպատակով ԵՊԲՀ-ի ռեկտորի հրամանով ստեղծվել է հանձնաժողով:

10.6 Համալսարանի պաշտոնական կայքէջում առկա է առանձին էջ, որը հրապարակում է կենտրոնի քաղաքականությունը, ռազմավարությունները, կենտրոնի կողմից կատարված ուսումնասիրության արդյունքները, ինչպես նաև հաշվետվությունների սեղմագրերը: Տարեկան երկու կամ երեք անգամ կազմակերպվում են հանդիպումներ ուսանողների և

պրոֆեսորադասախոսական կազմի հետ, որոնց ընթացքում քննարկվում են կենտրոնի աշխատանքային գործունեությունը, ընթացիկ խնդիրները և դրանց հնարավոր լուծումները:

ՂԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Որակի ներքին ապահովման համակարգը նոր է համալսարանում և մշակման փուլում է: Փորձագիտական խումբը վստահ է, որ կենտրոնը կզարգանա: Որակի ներքին ապահովման գործընթացում ներգրավված աշխատակազմի անդամները ցույց տվեցին իրենց մոտիվացիան և կարողությունները: Որակի ապահովման գործընթացներն ու թափանցիկությունը նոր մշակույթ է և հետագա զարգացման կարիք ունի: Այս առումով դեռևս վաղ է խոսել ընթացիկ աշխատանքների արդյունավետության և գործունակության մասին: Իրականացվում են զարգացման միտում ունեցող աշխատանքներ:

Եզրահանգում: Փորձագիտական խումբը եզրակացնում է, որ համալսարանի որակի ապահովման գործընթացներում տարբեր շահակիցներին ներգրավելու փորձը լավ հիմք է որակի մշակույթ ստեղծելու համար: Անցումային այս փուլում որակի ապահովման գործընթացում աշխատակազմի կարողությունների ձևավորումը անհրաժեշտ է համակարգի հետագա զարգացման համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ըստ չափանիշ 10-ի նկարագրության՝ փորձագիտական խումբն այն գնահատում է դրական՝ հիմք ընդունելով այն փաստը, որ համալսարանի որակի ապահովման քաղաքականությունը վերջերս է ներկայացվել և գործի դրվել շատ նվիրված աշխատակազմի կողմից:

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Անհրաժեշտ է՝

- ապահովել որակի ապահովման ֆորմալ ընթացակարգերի կիրառությունը,
- շարունակել ներդրումները շահակիցների ներգրավվածության ուղղությամբ, հատկապես պրոֆեսորադասախոսական կազմի մասնակցության ապահովմամբ՝ որակի մշակույթի հետագա զարգացման համար,
- ընդլայնել մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսները՝ նպատակաուղղելով որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման արդյունավետության բարձրացմանը և ներգրավելով ավելի շատ շահակիցներ,
- պարբերաբար իրականացնել ինքնագնահատման գործընթացներ և ապահովել հետադարձ կապի մեխանիզմների առկայությունն ու կիրառելիությունը,
- ամրապնդել կապը կառավարման և որակի ապահովման գործընթացների միջև (տես նաև չափանիշ 2):

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏՈՒՄ

| ԶԱՓԱՆԻՇ | ՈՐՈՇՈՒՄ |
|--|---------|
| <u>1. Առաքելությունը և նպատակները</u> | ԱՅՈ |
| <u>2. Կառավարումն ու վարչարարությունը</u> | ԱՅՈ |
| <u>3. Մասնագիտության կրթական ծրագրերը</u> | ԱՅՈ |
| <u>4. Ուսանողները</u> | ԱՅՈ |
| <u>5. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը</u> | ԱՅՈ |
| <u>6. Հետազոտությունը և զարգացումը</u> | ՈՉ |
| <u>7. Ենթակառուցվածքը և ռեսուրսները</u> | ԱՅՈ |
| <u>8. Հասարակական պատասխանատվությունը</u> | ԱՅՈ |
| <u>9. Արտաքին կապերը և միջազգայնացումը</u> | ՈՉ |
| <u>10. Որակի ներքին ապահովման համակարգը</u> | ԱՅՈ |

VI. ԳՈՐԾՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ

Որպես քննադատ գործընկերներ՝ փորձագիտական խումբն իրականացրեց նաև գործընկերային գնահատում՝ ըստ միջազգային չափանիշների՝ հաշվի առնելով համալսարանի՝ ԵԲԿՏ ինտեգրվելու ձգտումը: Այս ուսումնասիրության արդյունքում կատարվեցին մի շարք դիտարկումներ և տրամադրվեցին խորհրդատվություններ:

Դիտարկումներ.

1. Համալսարանը միանշանակ գտնվում է **անցումային** փուլում: Փորձագիտական խումբը նկատել է անհամապատասխանություն համալսարանի ռազմավարության և ներկայիս գործունեության միջև: ԵԲԿՏ-ում գործընկեր դառնալու ցանկությունն ունի մի շարք հետևանքներ: Թվում է՝ ոչ բոլորն են դա գիտակցում: Փոփոխությունները ժամանակ են պահանջում, սակայն որոշակի ժամանակահատվածից սկսած պետք է որոշումներ կայացնել՝ առաջ շարժվելու և փոփոխություններ կատարելու համար:
2. **Ծրագրերը** բավականին ավանդական են այն առումով, որ դրանք հիմնված են առանձնացված դասընթացների վրա և դասախոսակենտրոն են: Բացի դա, շեշտադրված է ավելի շատ տեսական գիտելիքը, քան կլինիկական հմտությունները և մասնագիտական վարքը: Ծրագրերը արդիականացնելու նպատակով անհրաժեշտ է ավելի բազմադիսցիպլինար և ուսանողակենտրոն մոտեցում:
3. **Հետազոտական** աշխատանքները շատ սահմանափակ են և՛ վերջնարդյունքի, և՛ հետազոտության մեջ պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների ներգրավվածության աստիճանի տեսանկյունից:
4. Միայն սահմանափակ թվով ուսանողներ են մասնակցություն ունենում միջազգային աշխատանքներին: Պրոֆեսորադասախոսական կազմի դեպքում էլ ոչ բոլորն են ներգրավված **միջազգայնացման** գործնառնությամբ:
5. Փորձագիտական խումբը չնկատեց միջազգային **բենչմարքինգի** իրականացման հիմքեր: Որոշ ամբիոններ ներգրավված են բենչմարքինգի մեջ, բայց այն ինստիտուցիոնալ մակարդակով չի իրականացվում:
6. Առկա է **սովյալների հավաքագրման** մեխանիզմ, բայց այն լիովին մշակված և ինտեգրված չէ:
7. Ծրագրերի որակի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման ներքին **կառուցվածքը** որպես այդպիսին խրթին է: Կան ներգրավված մի շարք հանձնաժողովներ և խորհուրդներ, և հարց է ծագում՝ արդյոք դա է աշխատանքները կազմակերպելու ամենարդյունավետ միջոցը:
8. Փորձագիտական խումբը նկատել է ներքին շահակիցների ներգրավման բավարար հիմքեր, սակայն **արտաքին շահակիցների** ներկայացուցչությունը տարբեր հանձնաժողովներում թվում է սահմանափակ: Բացի դա, արտաքին կապերով հաղորդակցությունը հիմնականում ֆորմալ բնույթ է կրում: Արտաքին շահակիցների ներդրումը որոշ չափով բացակայում է:
9. **Բյուջեի** ավելի քան 90%-ը տրամադրվում է ուսումնական գործընթացին՝ արդյունքում 10%-ից էլ քիչ՝ հետազոտությանը:

Խորհրդատվություններ

Փորձագիտական խմբի խորհրդատվությունները վերաբերում են այն խնդիրներին, որոնք առչվում են Բոլոնիայի գործընթացի շրջանակներում փոփոխություններ կատարելու համալսարանի ձգտմանը: Այդ խնդիրներից են՝ փոփոխությունների կառավարում, մասնագիտական կրթական բաժին, կրթական հայեցակարգի արդիականացում, ավելի շատ ջանքերի գործադրում հետազոտության ուղղությամբ և հետագա ներդրումների կատարում միջազգայնացման համար:

1. Հաշվի առնելով բավականին ավանդական համալսարանի ներկա իրավիճակը և այն փաստը, որ ԵՊԲՀ-ը որդեգրել է արդիականացման քաղաքականություն՝ ԵԲԿՏ-ին ընդառաջ, նկատվում է անհամապատասխանություն, որի հաղթահարման համար համալսարանը պետք է իրականացնի պլանավորում: Բացի դա, ԵՊԲՀ-ը պետք է կազմակերպի քննարկումներ՝ պարզաբանելու Բոլոնիայի հասկացությունն ու հետևանքները: Փորձագիտական խումբը խորհուրդ է տալիս սահմանել **փոփոխությունների կառավարման նախագիծ**, որը կներառի առաջիկա 5 տարիների համար հստակ սահմանված նպատակների և խնդիրների ժամանակացույց:
2. Համալսարանը պետք է փորձի իր ներքին կառուցվածքն ավելի պարզեցնել և առավել արդյունավետ դարձնել: Լավ սկիզբ կարող է լինել բոլոր հանձնաժողովների գործառույթների վերանայումը և դրանց քանակի նվազեցումը: Համալսարանը կարող է ընտրել ավելի **նվազագույն բաղադրիչներով կազմակերպական կառուցվածք**:
3. Ուսումնական գործընթացը բարեփոխելու նպատակով փորձագիտական խումբը խորհուրդ է տալիս աջակցել **մասնագիտական կրթական բաժնին**, ուսումնակրթական միջավայրի արդիականացման համար: Այս կենտրոնական բաժինը միջազգային վերջին զարգացումներին ծանոթ կրթության ոլորտի փորձագետներով կարող է աջակցել համալսարանի անձնակազմին ուսումնական այնպիսի հարցերում, ինչպիսիք են ուսումնական պլանի մշակումը, գնահատումը և ուսանողին աջակցության տրամադրումը: Կարևոր է ունենալ հստակ կրթական հայեցակարգ՝ հիմնված միջազգային վերջին մոտեցումների վրա և համահունչ սահմանված նպատակին: Մասնագետների կրթական բաժինը կարող է առաջնորդել այս հայեցակարգը մշակելու հարցում՝ ներգրավելով բոլոր ներքին շահակիցներին: Համալսարանում առկա լավ փորձը նույնպես կարող է օգտակար լինել (Հանրային առողջապահություն):
4. Հատուկ ուշադրության պետք է արժանացնել **աշխատակազմին և համալրման քաղաքականությանը**: Համալսարանը պետք է ներդրումներ կատարի արտասահմանից մասնագետներ գրավելու ուղղությամբ: Հրավիրված պրոֆեսորների և փոխանակման ծրագրերով աշխատակազմի անդամների թիվը նույնպես պետք է մեծացնել: Համալսարանը պետք է հայ անձնակազմին խրախուսի և աջակցի արտասահման մեկնելու ու համալսարանից դուրս նրանց վերապատրաստելու ուղղությամբ: ԵՊԲՀ-ը պետք է նաև աշխատի երիտասարդ մասնագետներին մասնագիտական վերապատրաստումներ տրամադրելու ուղղությամբ: Առկա են վերապատրաստման կենտրոն ստեղծելու ծրագրեր, և դա դրական զարգացում է:

5. Պետք է ապահովել պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների ակտիվ ներգրավվածությունը **հետազոտական աշխատանքներում**: Անհրաժեշտ է վերանայել հետազոտությանն առնչվող քաղաքականությունը և համալսարանի գործունեության մեջ և կրթական ծրագրերում ավելի կարևորել հետազոտությունը: Հետազոտական աշխատանքների ղեկավարները պետք է գործեն միջազգային չափանիշներին համապատասխան: Հետազոտությունը պետք է պարտադիր լինի բոլոր ուսանողների և դասախոսների համար և ներառվի ուսումնական պլանում՝ հետազոտական աշխատանքների համար համապատասխան կրեդիտների բաշխվածությամբ: Համալսարանում դասավանդողները պետք է լինեն նաև հետազոտողներ: Փորձագիտական խումբը նաև խորհուրդ է տալիս կենտրոնանալ համալսարանի ռազմավարությանը համապատասխան ընտրված որոշակի հետազոտական ոլորտների վրա, ոչ թե յուրաքանչյուր դասախոս զբաղվի իր հետազոտական աշխատանքով: Գերազանցության կենտրոնների ստեղծումն անշուշտ պետք է հաշվի առնել: Գործող հետազոտական կենտրոնի դերը նույնպես պետք է հստակեցնել և, ինչպես արդեն նշվել է, վերանայել հետազոտության համար հատկացվող ֆինանսական միջոցները:
6. **Ռեսուրսների** վերաբերյալ փորձագիտական խումբը խորհուրդ է տալիս մշակել ուսանողների համար տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) ինտեգրացված համակարգ: Համալսարանը պետք է հաշվի առնի SS ուղղությամբ ներդրումները՝ էլեկտրոնային գրադարանը և համակարգիչները՝ թղթային տարբերակով գրքերի և ամսագրերի փոխարեն: Կլինիկաների որոշ սարքավորումներ ժամանակակից են, սակայն միաժամանակ որոշները առկա չեն կամ հին են: Կլինիկաների, համալսարանների և անգամ առևտրային ձեռնարկությունների հետ համագործակցությունը պետք է հաշվի առնել, քանի որ արդյունքում հնարավոր է օգտագործել տեխնոլոգիապես բարձր, հետևապես թանկարժեք սարքավորումներ, սարքեր և այլն: Հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար նախատեսված հարմարությունները նույնպես բարելավման կարիք ունեն:

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐԸ

Պրոֆեսոր Բեն Վան Քեմփ - 1971թ. ստացել է Ներքին բժշկության, հեմատոլոգիայի մասնագետի կոչում: 1980թ. ստացել՝ գիտության դոկտորի կոչում:

Ներկա պաշտոնը

Բրյուսելի համալսարանական կլինիկայի կառավարման խորհրդի և համալսարանի բժշկական կենտրոնի ստուգող հանձնաժողովի նախագահ:

2011թ-ից հանդիսանում է «Բարձրագույն կրթության ենթակառուցվածքային կառավարման (OECD)» ծրագրի անդամ, Ֆլոմանդական Ինտերհամալսարանի խորհրդի (VLIR) լիազոր ներկայացուցիչ:

1988թ.-ից սկսած հեմատոլոգիայի պրոֆեսոր է:

Նախկին պաշտոններ

2000- 2008թթ. եղել է Բրյուսելի Ազատ համալսարանի (Vrije Universiteit Brussel) և բժշկության ֆակուլտետի դեկան (1994-2000): Բրյուսելի Ազատ համալսարանի (Vrije Universiteit Brussel) ռեկտոր (2000-2008) և բժշկության ֆակուլտետի դեկան (1994-2000): Երկու պաշտոններում էլ համատեղել է համալսարանի կրթական և վարչական կառավարումը և՛ դեկավարել է «Բոլոնիայի» հռչակագրով սահմանված փոփոխությունների իրականացումը՝ շեշտադրումը կատարելով սահմանված առաքելության բոլոր ասպեկտների (հետազոտություն, կրթություն և հասարակական պատասխանատվություն) որակի ապահովման և ուսումնական պլանների վերանայման հարցերին:

Որպես UNICA (Եվրոպական մայրաքաղաքների համալսարանների ցանցի) հանձնաժողովի անդամ (2007-2011), մասնակցել է մի շարք համալսարանների արտաքին գնահատման գործընթացներում, ինչպես նաև որպես նախաձեռնող հանդես է եկել միջազգային համատեղ մագիստրոսական և ասպիրանտական ծրագրերի իրականացմանը: Բրյուսելի կլինիկական հեմատոլոգիայի բաժնի դեկավար (1985-2012):

Պարգևներ

Belgian Franqui Chair University of Antwerp (2001); Ֆլոմանդական բժշկական թագավորական ակադեմիայի անդամ (2002); Բելգիայի Ալբերտ II թագավորը պարգևատրել է նրան բարոնի կոչմամբ (2007):

Պրոֆեսոր Հ.Ֆ. Պ. (Հարի) Հիլեն (1943) - հեմատոոնկոլոգիայի մասնագետ և թերապևտ: 1993թ. դարձել է Մասստրիքթի համալսարանի ներքին բժշկության և օնկոլոգիայի պրոֆեսոր: 1996թ. դարձել է ներքին բժշկության դեպարտամենտի պրոֆեսոր և թերապևտների մասնագիտական վերապատրաստման դեկավար Մասստրիքթի ակադեմիական հիվանդանոցում: Ունի հրատարակված մոտ 100 գիտական աշխատություն օնկոլոգիայի և ընդհանուր ներքին բժշկության ոլորտներում:

2003թ. ընտրվել է Մասստրիքթի համալսարանի բժշկության ֆակուլտետի դեկան և 2007թ.՝ առողջության բժշկության և բնագիտությունների ֆակուլտետի (FHML) դեկան:

Եղել է Մասստրիքթի համալսարանի բժշկական կենտրոնի խորհրդի փոխնախագահ: Ուսումնական կարիերայի ընթացքում իր հատուկ հետաքրքրությունների շրջանակն ընդգրկել է բժշկական վերապատրաստումն ու կրթությունը:

Միջազգային մակարդակով եղել է Ներքին բժշկության եվրոպական ֆեդերացիայի խորհրդի անդամ, «Ներքին բժշկության եվրոպական ամսագրի» խմբագիր: 2001թ. սկսած՝ բժշկության ամերիկյան քոլեջի անդամ է:

Թոշակի անցնելուց հետո՝ 65 տարեկանում, այժմ աշխատում է որպես խորհրդատու Մասստրիքթ համալսարանի հանձնաժողովում և զբաղվում է միջազգային բժշկական կրթությամբ և համալսարանների միջազգային վարկանշավորմամբ: 2008թ. և 2011/12թթ. եղել

Է Նիդեռլանդներում ավարտական կուրսերի՝ բժշկության ուղղությամբ վերապատրաստման հավատարմագրման հանձնաժողովի նախագահ: Բժշկական չորս այլ դպրոցների ներքին հավատարմագրման ղեկավար է (NVAO գործընթաց):

Պրոֆեսոր Սամվել Պիպոյան - 1987թ. դարձել է կենսաբանության դիպլոմավորված մասնագետ: 1993թ. ստացել է PhD աստիճան կենսաբանության ոլորտում: 2010թ. ստացել է դոկտորի աստիճան: Գիտական հետազոտությունների շրջանակն ընդգրկում է կենդանաբանությունը, մասնագիտական ուսուցումն ու վերապատրաստումները: 1991-2008թթ. ՀՀ ԿԳ նախարարության նախնական և միջին մասնագիտական կրթության բաժնի պետ: 2008-2010թթ. եղել է Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնի տնօրեն: 2010թ. ի վեր Ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմի բաժնի պետն է: Սկսած 2012թ.՝ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կենսաբանության ամբիոնի պրոֆեսոր է: Ավելի քան 85 հոդվածների հեղինակ է կենսաբանության ոլորտում, ունի նաև 1 մենագրություն, 1 ուսումնական ձեռնարկ, իսկ մասնագիտական կրթության ոլորտում ունի ավելի քան 15 հոդված, մեկ ուսումնական ձեռնարկ, 4 գիտահետազոտական աշխատանքներ: «Մասնագիտական կրթության բարեփոխումներ» ՀԿ-ի համահիմնադիր և խորհրդի անդամ, նաև Ցկյանս ուսումնառության հայաստանյան լիգայի հիմնադիրներից և խորհրդի անդամ, գյուղատնտեսության ոլորտի հանձնաժողովի նախագահ, մեծահասակների կրթության բազայի խորհրդի անդամ, «Մեծահասակների կրթություն և ցկյանս ուսումնառություն» ՀԿ-ի համահիմնադիր, Մեդրիի պետական քոլեջի կառավարման խորհրդի անդամ, Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի կառավարման խորհրդի անդամ: Մասնակցել է ավելի քան 20 գիտական համաժողովների մասնագիտական կրթության շրջանակներում:

Լևոն Եպիսկոպոսյան - 1974թ. ավարտել է Մոսկվայի պետական համալսարանը, մասնագիտությունը՝ կենսաբանություն, մարդաբանություն: Ստացել է դոկտորի կոչում /PhD/ (կենսաբանություն, մարդաբանություն). «Երեխաների ու դեռահասների մոտ վահանաձև գեղձի ֆունկցիոնալ ակտիվությունը և նրանց ֆիզիկական զարգացումը», Մոսկվայի պետական համալսարան, 1997: 1989թ. դարձել է գիտությունների դոկտոր (կենսաբանություն, գենետիկա). «Աճի պրոցեսների գենետիկական մարդու օնոտգենեզում», Ընդհանուր գենետիկայի ինստիտուտ, գիտությունների ռուսական ակադեմիա: Հետազոտության շրջանակն ընդգրկում է բնակչության գենետիկական (հայերի և այլ հնագույն ժողովուրդների գենետիկական պատմությունը), հնէամարդաբանությունը (Փոքր Կովկասը որպես հնագույն մարդու միգրացիաների տարանցիկ միջանցք), բժշկական գենետիկական (հայերի տարբեր աշխարհագրական խմբերի ընտանեկան միջերկրածովյան տենդի պոպուլյացիոն գենետիկա), առողջապահության վիճակագրությունը (Մանկական մահացության գործոնները Հայաստանում): 1978-1991թթ. եղել է Երևանի պետական բժշկական համալսարանի ավագ հետազոտող: 1991թ. սկսած՝ եղել է «Մարդու ինստիտուտ» ՄՊԸ-ի տնօրեն: 1995-1996թթ. եղել է Արցախի պետական համալսարանի ռեկտոր, 2000-2002թթ.՝ ՀՀ առողջապահության նախարարության Առողջապահության քաղաքականության վարչության պետ: 2002-2005թթ. եղել է ՀՀ Առողջապահության նախարարության բժշկական տեղեկատվության կենտրոնի ղեկավար: Սկսած 2007թ.ից՝ գիտությունների ազգային ակադեմիայում եղել է Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի էթնոգենոմիկայի լաբորատորիայի վարիչ, 1981թ. ի վեր դասավանդում է նաև Երևանի պետական համալսարանում, և սկսած 2009թ.՝ Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի պրոֆեսոր է: Սկսած 1992թ.՝ Եվրոպական մարդաբանական ասոցիացիայի (EAA) անդամ է, 2012թ.-ից՝ նաև Մոլեկուլային և բջջային կենսաբանության հայկական ասոցիացիայի անդամ: 2012թ. ի վեր՝ ՀՀ Մոլեկուլային կենսաբանության

ինստիտուտի գիտական խորհրդի անդամ է (NAS): Մասնակցել է EAA կոնգրեսներին (1994, 1996, 1998, 2000), բնակչության գենետիկային (2002-2012) և մարդու կենսաբանության ու էկոնոմիկային նվիրված համաժողովներին (2004, 2006): Սորոսի հիմնադրամի կողմից պարգևատրվել է գիտական նվաճումների համար, 1993թ. ստացել է Միացյալ Թագավորության Ռոյալ Սոսայրթի դրամաշնորհ Միացյալ Թագավորություն կարճաժամկետ ակադեմիական այց կատարելու համար /1999թ./, իսկ 2009թ. ստացել է ԵՄ «Էրազմուս Մունդուս» կրթաթոշակ:

Աննա Մարգարյան - Ավարտել է Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանը՝ ստանալով բակալավրի աստիճան լեզվաբան մասնագիտությամբ: Ներկայում Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կրթության կառավարման ուսանող է: 2010թ. աշխատել է «LX Production» ՍՊԸ-ում և 2011թ.՝ «S & V TRANS» ՍՊԸ-ում՝ որպես մենեջեր: 2011թ. N105 դպրոցում աշխատել է որպես անգլերենի ուսուցչուհի: Այժմ աշխատում է Կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունում որպես վարչության պետի տեղակալի օգնական:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ



Փորձնական ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով փորձագիտական գնահատում իրականացնող խմբի այցի

Երևանի Մ. Հերացու անվան պետական
բժշկական համալսարան
09.06.2013թ. – 12.06.2013 թ.

09.06.2013թ.

| | | Մեկնարկ | Ավարտ | Տևողություն |
|---|-----------------------------------|---------|-------|-------------|
| 1 | Հանդիպում համալսարանի ռեկտորի հետ | 09:00 | 09:15 | 15 րոպե |
| 2 | Փորձագիտական խմբի փակ հանդիպում | 09:15 | 13:15 | 240 րոպե |
| 3 | Ընդմիջում | | | |

10.06.2013թ.

| | | Մեկնարկ | Ավարտ | Տևողություն |
|---|--|---------|-------|-------------|
| 1 | Հանդիպում ռեկտորի և պրոռեկտորների հետ | 8:30 | 10:00 | 90 րոպե |
| 2 | Հանդիպում դեկանների հետ | 10:00 | 11:00 | 60 րոպե |
| 3 | Հանդիպում ամբիոնի վարիչների հետ | 11:00 | 12:00 | 60 րոպե |
| 4 | Ռեկուրսների դիտարկում (գրադարան, SS ռեկուրսներ և այլն) | 12:15 | 13:15 | 60 րոպե |
| 5 | Ընդմիջում (փորձագիտական խմբի քննարկումներ) | 13:15 | 14:15 | 60 րոպե |
| 6 | Հանդիպում Ուսանողական խորհրդի հետ | 14:15 | 15:00 | 45 րոպե |
| 7 | Հանդիպում Գիտական խորհրդի հետ | 15:15 | 16:00 | 45 րոպե |
| 8 | Փորձագիտական խմբի փակ հանդիպում և փաստաթղթերի ուսումնասիրություն | 16:00 | 17:30 | 90 րոպե |
| 9 | Հանդիպում ռեկտորի հետ | 17:45 | 18:00 | 15 րոպե |

11.06.2013թ.

| | | Մեկնարկ | Ավարտ | Տևողություն |
|---|--|---------|-------|-------------|
| 1 | Հանդիպում պրոֆեսորադասախոսական կազմի հետ | 8:30 | 9:30 | 60 րոպե |
| 2 | Հանդիպում որակի ապահովման անձնակազմի և այլ աշխատակիցների հետ | 9:45 | 10:45 | 60 րոպե |
| 3 | Բաց հանդիպում փորձագիտական խմբի հետ | 11:00 | 12:00 | 60 րոպե |
| 4 | Ռեկուրսների դիտարկում | 12:00 | 13:00 | 60 րոպե |
| 5 | Ընդմիջում (փորձագիտական խմբի քննարկումներ) | 13:00 | 14:15 | 75 րոպե |

| | | | | |
|---|---|-------|-------|---------|
| 6 | Հանդիպում ստոմատոլոգիական ֆակուլտետի ⁸ ներկայացուցիչների հետ | 14:15 | 15:00 | 45 րոպե |
| 7 | Հանդիպում դեղագիտական ֆակուլտետի ներկայացուցիչների հետ | 15:15 | 16:00 | 45 րոպե |
| 8 | Հանդիպում ռազմական բժշկության ֆակուլտետի ներկայացուցիչների հետ | 16:15 | 17:00 | 45 րոպե |
| 9 | Հանդիպում հանրային առողջապահության ֆակուլտետի ներկայացուցիչների հետ | 17:15 | 18:00 | 45 րոպե |

12.06.2013թ.

| | | Մեկնարկ | Ավարտ | Տևողություն |
|---|--|---------|-------|-------------|
| 1 | Փորձագիտական խմբի փակ հանդիպում (ներառյալ ընդմիջում) | 08:30 | 12:00 | 210 րոպե |
| 2 | Հանդիպում Կառավարման խորհրդի անդամների հետ | 13:00 | 14:00 | 60 րոպե |

15.06.2013թ.

| | | Մեկնարկ | Ավարտ | Տևողություն |
|---|--|---------|-------|-------------|
| 1 | Փորձագիտական խմբի փակ հանդիպում (նախնական դիտողությունների ներկայացում փորձագիտական խմբի անդամների կողմից) | 09:30 | 10:30 | 60 րոպե |

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի
Տնօրեն՝ Ռ. Թովչյան

Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի
Ռեկտոր՝ Մ. Նարիմանյան

⁸ Դեկան, ֆակուլտետային խորհրդի 3 ներկայացուցիչներ, 2 ուսանող (ընդհանուր 6 ներկայացուցիչ ամեն ստորաբաժանումից, տևողությունը՝ 45 րոպե)

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԸ


| N | Փաստաթղթի անունը | Չափանիշ |
|----|---|---------|
| 1 | «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը | 1 |
| 2 | «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը | 1 |
| 3 | «ՀՀ բուհերում երկրորդ մասնագիտություն ստանալու մասին» ՀՀ Կրթության և գիտության նախարարության 15.08.2006 N671-N որոշում | 1 |
| 4 | «ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 31.03.2011 N 332-N որոշում | 1 |
| 5 | «ՀՀ բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգի ներդրման մասին» ՀՀ կառավարության 22.12.2005 N 2307-N որոշում | 1 |
| 6 | «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկի հաստատման մասին» ՀՀ կառավարության 30.08.2007 N1038-N որոշում | 1, 3 |
| 7 | ՀՀ բուհերում ուսանողների հեռացման և վերականգման կարգի հաստատման ՀՀ ԿԳՆ 17.11.2011 N1242-N հրաման | 1 |
| 8 | Երևանի պետական բժշկական համալսարանի պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրություն | 1 |
| 9 | ԵՊԲՀ 2006-2010 ռազմավարական պլան | 1 |
| 10 | ԵՊԲՀ 2011-2015 ռազմավարական պլան | 1 |
| 11 | ԵՊԲՀ ՊՈԱԿ-ի կառուցվածքը | 2 |
| 12 | ԵՊԲՀ ՊՈԱԿ-ի գիտական խորհրդի կանոնակարգ | 2 |
| 13 | Ուսումնամեթոդական վարչության կանոնակարգ | 2 |
| 14 | Ամբիոնների վարիչների ընտրության ընթացակարգ | 2 |
| 15 | ԵՊԲՀ գիտական խորհրդի արձանագրություններ | 2 |
| 16 | Ընդհանուր բժշկության ֆակուլտետի գործողությունների պլան (2012-2013) | 2 |
| 17 | ԵՊԲՀ կրթական ծրագրերի ուսումնական պլաններ | 3 |
| 18 | ԵՊԲՀ կրթական ծրագրերի ամենամյա մշտադիտարկման ընթացակարգ | 3 |
| 19 | ԵՊԲՀ ակադեմիական պարտքերի լրացման կարգ | 3 |
| 20 | ԵՊԲՀ բակալավրիատի և մագիստրատուրայի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կազմակերպման և անցկացման կարգ | 3 |
| 21 | ԵՊԲՀ բանավոր քննությունների կարգ | 3 |
| 22 | Բակալավրիատի և մագիստրատուրայի ավարտական քննությունների ընթացակարգ | 4 |
| 23 | ԵՊԲՀ ուսանողական խորհրդարանի կանոնադրություն | 4, 2 |
| 24 | Ուսանողների գիտելիքի գնահատման համակարգի ընթացակարգ | 4 |
| 25 | Ուսանողների տեղափոխման ընթացակարգ, ուսումնամեթոդական վարչության հրամանները տեղափոխությունների մասին | 4 |
| 26 | ԵՊԲՀ ՊԴ կազմի ընտրության ընթացակարգ | 5 |
| 27 | Ստորաբաժանումների հաստիքակազմի, դասախոսների տարակարգերի, ուսումնական ծանրաբեռնվածության և վարձատրության կանոնակարգ | 5 |

| | | |
|----|---|----|
| 28 | ԵՊԲՀ ամբիոնների հաստիքակազմի, դասախոսների դասընթացների և ուսումնական ծանրաբեռնվածության կանոնակարգ | 5 |
| 29 | ՊԴ կազմի որակավորումների գնահատման հարցումներ | 5 |
| 30 | ԵՊԲՀ հրատարակությունների ցանկ | 6 |
| 31 | Կրթական ռեսուրսների և ուսանողներին տրամադրվող օժանդակ ծառայությունների որակի ապահովման ընթացակարգ | 7 |
| 32 | ԵՊԲՀ ֆինանսական եկամուտներ/ծախսեր | 7 |
| 33 | ԵՊԲՀ ՊՈԱԿ-ի որակի ապահովման քաղաքականություն | 10 |
| 34 | ԵՊԲՀ ՊՈԱԿ-ի որակի ապահովման և գնահատման կենտրոնի կանոնակարգ | 10 |
| 35 | ԵՊԲՀ ՊՈԱԿ-ի ենթակառուցվածքային ինքնագնահատման ընթացակարգ | 10 |
| 36 | ԵՊԲՀ որակի ապահովման խնդիրներին առնչվող փաստաթղթեր (որակի ապահովման և գնահատման կենտրոնի տարեկան հաշվետվություն) | 10 |
| 37 | ԵՊԲՀ որակի ապահովման և գնահատման կենտրոնի կրթական ռեսուրսների գնահատման գործիքներ | 10 |
| 38 | ՊԴ կազմի/դասախոսների և ուսանողների շրջանում անցկացված՝ ուսուցման և դասավանդման գործընթացի գնահատման հարցումների արդյունքներ | 10 |
| 39 | Շրջանավարտների և գործատուների շրջանում անցկացված հարցումների արդյունքներ | 10 |

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

- Գրադարան
- Ընթերցասրահ
- ՏՏ դահլիճ
- Ացյ «Հերացի» N1 համալսարանական հիվանդանոց
 - ✓ Ակնաբուժական կլինիկա – կլինիկական ուսուցման դասասենյակներ, համակարգչային սարքավորմամբ բուժման սենյակ, էլեկտրոֆիզիոլոգիական հետազոտումների սենյակ, խորհրդատվության սենյակ, օրթոպեդիկ բուժման սենյակ, պլեոպտիկ բուժման սենյակ, ֆունկցիոնալ ախտորոշման սենյակ, երեխաների տեսողության պահպանման սենյակ
 - ✓ Կլինիկական ախտորոշման լաբորատորիա – համակարգչային տոմոգրաֆիա, մագնիսառեզոնանսային տոմոգրաֆիա, անզիոգրաֆիա, հետազոտության սենյակ
 - ✓ Ընդհանուր և ինվազիվ սրտաբանության կլինիկա – հետազոտության սենյակ
 - ✓ Ընդհանուր և էնդովասկուլյար նյարդավիրաբուժության կլինիկա

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ

1. **ՈԱԱԿ** – «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամ
2. **ՈԱՇ** – Հայաստանի որակավորումների ազգային շրջանակ
3. **ARQATA** - Հայաստանում որակի ապահովման տեխնիկական աջակցություն
4. **ECTS** – Կրեդիտների փոխանցման եվրոպական համակարգ
5. **NVAO** – Նիդեռլանդների և Ֆլանդրիայի հավատարմագրման կազմակերպություն
6. **PDCA** – Պլանավորել-կատարել-ստուգել-բարելավել շրջափուլ
7. **ՀՀ** – Հայաստանի Հանրապետություն
8. **SER** – Ինքնավերլուծության զեկույց
9. **ԵՊԲՀ** – Երևանի պետական բժշկական համալսարան